

ԵՐԵՎ

ԽՈՍՀԱՅՈՒԹԻՒՆ

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒՆ Վ. Բ.

ՐԱՅՈՒ

ՔԱՅԵԱՅԻ ՄԸ ՈՒ ԱՇԽԱՐ

ՀԱԿԱԿԻ ՄԸ ՄԵԶ :



Դ ՕՄԻՒԹԵԱՆ

Դ ԱՊԱՐԱԿ ԿՈՎԵՆԻ ՄՈՒ ԿՈՒՖՈՒ

1844 :

George A. Hill

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ Պ. Ա. Վազգեն կ քիւ

ԵՐԵՎ

ԽՈՍՀԿՅՑՈՒԹԻՒՆ

ՓՐԱՌԻԹԵԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅՈՆ.

ՔԱՀԱՆԱՅԻ ՄԸ ՈՒ ԱՇԽԱՐՀԱ.

ԿԱՆԻ ՄԸ ՄԵԶ :



Ե ԶՄԻՒՌՈՒՆԻԱ

Ե ՏՊԱՐԱՆԻ ԿՈՒՆԴԵՆՄՈՍ ԿՈՒՖՈԹԻ

1844 :

8298



“**Խ**ոչ կըշահի մարդ մը՝ թէ որ
բոլոր աշխարհ վաստըկի, և իր ան-
ձր վնասէ . կամ իր անձին համար՝
Ի՞ոչ աղատչէք պիտի տայ մարդ”:
Առաջլ . ժկ . 26 :

“**Ե**ստուծոյ առջել մեկ մարմին
մը արդարացած ըլլար օրէնքին
գործքերով . ինչու որ՝ օրէնքով
է մեղք ճանչնալը : Ի՞այց հիմա ա-
ռանց օրէնքի **Ե**ստուծոյ արդարու-
թիւնը յայտնուած է , օրէնքէն և
մարդարէներէն վկայուած ըլլալով:
Պատճառն որ **Ե**ստուծոյ արդա-
րութիւնը հիսուս Քրիստոսի հա-
ւատքէն՝ բոլոր հաւատացողներուն
վրայ է . ու չկայ զանազանութիւն :
Ինչու որ ամենքը մեղք գործեցին ,
և **Ե**ստուծոյ փառքէն պակսեցան :
Եւ անոր շնորհըովը ձրի՛ կարդա-
րանան հիսուս Քրիստոսով եղած
փրկութիւնովը” : **Ա**ռաջլ . 7 . 20
—24 :

“Եկէք ինծի բոլո՛ր հոգնած ու
ըեռնաւորածներ , և ես ձեզ կը
հանդչեցունեմ” : Աշտար . ժա . 28 :

“Ես եմ ճամբան և ճշմարտու-
թիւնը ու կեանքը . մէկը աօրը
քով չգալ , թէ չէ ինծմով” : Յօհ .
ժդ . 6 :



ԵՐԵՎ

ԽՈՍԿԱՅԱՄԹԻՒՆ



Քառհանուն կը սե . Ողջոյն քեզ
բարեկամ . ահա կըտեսնեմ . քեզ
առտուանց կանուխ ելած , աշխա-
տանքի սկսած , արջառներդ ու ոչ-
խարներդ կերակրած , և ծառաներդ
գործի մէջ մտած : Կըտեսնեմ որ
քուսրտիդ գլխաւոր ցանկութիւնը
ու փափաքը ան է որ աս աշխարհիս
մէջ հարստանաս ու փարթամա-
նաս :

Աշխարհանկալ . Այս , տեր իմ ,
աս ամէնը հարկաւոր է . կերակուրի

և հանգերծի համար պէտք է հոգ
տանիլ . կալուածքին վարձքը պէտք
է տէրոջը վճարել . և աս ամէն բա-
ներուն համար պէտք է ջանալ ու
աշխատիլ :

• Յ. • Ես բնաւ չեմ ուղեր քեզ
արդիլել քու աշխատանքէդ . ին-
չու որ քու պարտքդ է չծուլանալ
ու չթուլնալ քու հարկաւոր գործ-
քերէդ . բայց դուն գիտես որ մէկ
ուրիշ պարտաւորութիւն մըն ալ
ունիս այդ մշակութենէդ զատ .
քու հոգիդ ալ պէտք է կերակրես
ու հաղուեցունես :

• Ա. • Ենշուշտ ամէն բանէն առաջ
հոգիին համար պէտք է հոգ տա-
նիլ , վասն զի ան է գլխաւոր պար-
տաւորութիւննիս . բայց ես կը յու-
սամ որ անհոգ չեմ իմ հոգիիս ու
դալու աշխարհին համար . և տսոր
համար ոլիտի տըտմիմ , թէ որ դուն

զիս ասանկ գէշ մարդ մը սեպես .
կարծեմ իրաւունք չունիս զիս ա-
նանկ անհոգ մարդ մը սեպելու :

Ք. · Պասնաւոր պատճառ մը
չունիմ քեղմէ կասկածելու ուրիշ-
ներէն աւելի . բայց երբոր չորս
կողմն կընայիմ ամենուն վրայ , և
կըդիտեմ ընդհանրապէս մարդոց
անհոգութիւնը իրենց փրկութեա-
նը վրայով , շատ կըցաւիմ իմ մահ-
կանացու ընկերներուս համար . և
յատկապէս քեղի նայելով՝ որ աս
ժողովուրդէն մեկն ես , պարտաւոր
կըհամարիմ իմ անձս իմացունել
քեղի ան քու վրադ դալու դատաս-
տանը , որ առանց թողութիւն մե-
ջաց գտնալու Հիսուս Կրիստոսի
հաւատքովը՝ չկորսուիս , այլ մաս-
նակից ըլլաս սրբոց վիճակին : Ասդ .
առ . 12 :

Ա . ՏԵՐ իմ , ինչու անանկ բա-

Ներ կը մատես մեր վրայ, որ բոլորովին հակառակ են մարդասիրութեան :

Յ. Օռուու մաքով մի՛ առներ ատ բառը Անդրտառէլու-Ենան. վասն զի ան նոյն նշանակութիւնը ունի, ինչպէս որ Անդրբառը : Անդրը չըպահանջէր որ զամէն մարդիկ բարի սեպենք առանց ընտրութեան . հապա որ ամէնուն համար բարի ուղենք, և ամէնուն հետ բարի մըտքով վարուինք : Աւրեմն թէ որ ես քեզի համար հոգ չտանէի ու չըտրտմէի, ցած թէ որ բոլորովին զուրկ ըլլայի մարդասիրութիւն ընելէն, անատենը զիս մարդասէր մարդ մըլլալ կըսեպէի՞ր :

Ա. Բայց ես կը յուսամ որ դու մեղ ամէնս չես դատապարտեր . իրաւ որ մեզմէ մէկ քանիները ամբարիշտ՝ երդում ընող և արբեցող

մարդիկ են, սակայն չե՛ թէ մենք ա-
մէնքս այնպէս ենք : “Դուն քեզմէ-
գիտես որ միշտ ես եկեղեցի կեր-
թամ”, և տարին քանի մը անդամ
հաղորդութիւն կառնեմ : Աս ընաւ
մէկու մը վիաս տուած չեմ, ու ամէն
մարդու կը հատուցանեմ ինչ որ կը
պարտիմ :

“Ք. Եւրեմն քու յոյսերդ ասոնց
վրա՞յ կը հաստատես երկնից արքա-
յութիւնը ստանալու համար : Իժէ
որ աս է քու հաստատութեանդ հի-
մը, յայտնապէս պարտիմ ըսել
քեզի, որ այդ կարծիքդ քեզ ան-
յոյս պիտի թողու քննութեան օ-
րը : Կննենք անդամ մը անիկա
լստուծոյ խօսքով : ”Աս ընաւ
մէկու մը վիաս տուած չեմ” ըսե-
լով, իբր թէ ցուցընել կուզես որ
ընաւ մէկը չես յափշտակեր կամ
սպաններ . ես ալ չեմ կարծեր որ

ըրիր . բայց տակաւին . դուն . շատ
մեղք գործած ես և շատ լինասներ
տուած ես ոչ միայն ուրիշներուն ,
հապա մասնաւորապէս բուն քու
անձիդալ՝ Աստուծոյ սուրբ օրէնքին
դէմ մեծ ու անթիւ յանցանքներ
գործելով : Այս , ստոյգ կրսեմ որ
դուն Աստուծոյ պատուիրանքնե-
րուն ամէն մէկը կոտրած ես :

Ա . Ո՞վ ըստ քեզի աս բաները
իմ վրայովս :

Ք . Աստուծած ինքը իր խօսքովը .
վասն զի ինքը կրսէ թէ դու և ամէն
մարդիկ մեղանչեցին , ու Աստու-
ծոյ փառքէն պակսեցան . (Հայով .
է . 23 .) և անոր համար դուն ալ
իր ամէն պատուիրանքները կոտ-
րած ես :

Ա . Ես բնաւ կոապաշտութիւն ,
կամ սպաննութիւն , և կամ շնու-
թիւն չեմ ըրեր :

Ք. Այսուհետեւ, ատոնց ամէնն ալ ը-
 րեր ես . միթէ բնաւ երկրաւոր բան
 մը սիրած չե՞ս Աստուծմէ ու անոր
 չնորհքէն աւելի . բնաւ ուրիշ բա-
 նէ մը չվախցա՞ր զԱստուած բար-
 կացունելէն աւելի , անանկ որ լաւ
 համարիլ դիտցուած պարտաւորու-
 թիւն մը թողուլ , քան թէ քիչ
 մը ժամանակաւոր չարիք քու վրադ
 բերել : Ահա ասով առաջին պատ-
 ուիրանքը կոտրած ես . և երկրորդ
 պատուիրանքը կըցուցընէ Աստու-
 ծոյ պաշտօնը սթափի ջերմեռանդու-
 թեամբն ու սրբութեամբը ընել .
 և վասն այնորիկ ամէն ինչ որ ան-
 վայելուչ էր քու աղօթքիդ մէջը ,
 աս պատուիրանքին դէմ էր , ինչ-
 պէս որ ցրուած միտքն՝ ծուլութիւնն
 և անամօթութիւնը , որոնք կուոք
 պաշտելու պէս կըկոտրեն աս պատ-
 ուիրանքը . այսովէս է նաև աղօթքը

ընելն ատելը : Եւ հիմայ՝ կըկար-
 ծեմ որ քու սնձդ անմեղ սեպելու
 պատճառ մը չունիս : Աւրեմն քու
 եկեղեցի գալր և հաղորդութիւն
 առնելդ անանկ ծուլութիւնով ու
 անհօգութիւնով աւելի արժան էր
 քու մեղքերուդ հետ դասէիր , քան
 թէ անոնցմով քու անձդ Կոտուծոյ
 առջեր արդարացունելու համար-
 ձակէիր : Ի՞այց քանի մը բոպէ ա-
 ռաջ եմ լսեցի Տէրոջը անունը ո-
 չինչ տեղը առնելդ և զուր տեղը
 գործածեցիր , առանց զարհուրելի
 զգայութիւն մը ունենալու անոր
 մեծ փառաւորութենէն՝ որուն վը-
 րայ որ խօսեցար : Եւ դուցէ տասը
 հաղար անդամ այսպէս ըրիր քու
 կենացդ մէջը . ահա տառվ երկրորդ
 պատուիրանքը կոտրած ես : Այս ա-
 տեն որ առանց մէկ հարկաւոր գոր-
 ծի մը ծուլութիւն ես լրեր Կոտու-

ծոյ պաշտօնին գալու կիրակի օրը ,
 և տեղի առւեր ես աշխարհային
 մտածմունքներու՝ որ կարդիլեն
 քեզ մտադիւրութեամբ զԱստուած
 պաշտելեն , ու աշխարհային գործ
 մը գործերես ան օրը՝ որն որ կրնա-
 յիր ուրիշ օր գործել , և հոգ չես ը-
 րեր որ ան բոլոր օրը Աստուածոյ հա-
 մար սուրբ պահես կարդալով՝ լսելով՝
 աղօթք ընելով՝ մտածելով ու օգտա-
 կար խօսակցութիւն ընելով , ապա
 յայտնի է որ Տէրոջը սուրբ օրը
 պղծած ես : Աս պատուիրանքներուն
 միտքը ան է որ քու Տէր Աստուածդ
 քու բոլոր սրառվդ պիտի սիրես .
 բայց գունասկից պակսած գանուե-
 ցար՝ երբոր քու ամեն գործդ Աս-
 տուածոյ փառքին համար չգործեցիր :
 Ուրեմն հիմայ ի՞նչ կը խորհիս քու
 անմեղութեանդ վրայ ան պարտա-
 ւորութիւններուն նայելով՝ որ տա-

սը պատուիրանքներուն առաջին
տախտակին մէջ յայտնուած են :

Ա . Ես չեմ կրնար համարձակիլ
արդարացունել իմ անձս դէպի
Աստուած եղած պարտաւորու-
թիւններուն նայելով, բայց հաս-
տատ դիտեմ որ մարդու վնաս
տուած չեմ :

Յ . Դուն այսպէս չեիր ըսեր՝
թէ որ Աստուծոյ օրէնքին հոգեոր
բնութիւնը և գերազանցութիւնը
իմանայիր, ինչպէս որ մեր Տէրը
մեկնեց իր քարոզութեանը մէջ լե-
ռանը վրայ : Ատք. Ե, Ղ, Է. Գւ.
Հոն կըդտնաս որ գէշ նայուածքը
աչքով կամ սրտով շնութիւն կը
սեպուի Աստուծոյ առջելը. և զուր
տեղը բարկանալը ու խօսքով նա-
խատելը ինչպէս մարդասպանու-
թիւն կըսեպուի. ուրեմն ով կրնայ
արդարացունել իր անձը ասոնցմէ :

Ծծէ որ մէկալ պատուիրանքներն
ալ աս կերպով խմանալու ըլլաք,
ալ յայտնի պիտի ըլլայ, որ քու
ամէն կենցաղավարութիւնդ՝ որ ան-
վայել է քու աստիճանիդ, ամէն
անամօթութիւն՝ մեծերուն երեսին
յանդգնութեամբ նախատինք տա-
լը և քեզմէ վարերուն հետ անո-
դորմութեամբ ու անիրաւութեամբ
վարուիլը հինգերորդ պատուիրան-
քը կըկոտրեն: Եւ ամէն գէշ խօ-
սակցութիւնն՝ զրապարտութիւնն ու
սուտ ու մուտ խօսքերը՝ որ ուրիշն
վեաս կուտան, հակառակ են իննե-
րորդ պատուիրանքին. Ե ամէն տըր-
տնջմունք՝ անգոհացող միտք՝ նա-
խանձ ու ագահութիւն մեղք են
ու ընդդէմ տասներորդ՝ պատուի-
րանքին:

Ա. Ուրեմն կերեի թէ միայն մէկ
պատուիրանք կըմնայ, որ անոր
դէմ եւ չեմ մեղանչեր:

Յ. Յ. Ո. Ե. որ իրաւցունեքու ան-
 ձըդ ու Աստուծոյ օրէնքը ճանչ-
 նայիր, ալ քու անձդ անոնց մէկէն
 ազատ ըլլալ չէիր սեպեր: Ո՞՞-
 բարկանար, ինչու որ քու հոգիիդ
 մինկութիւնը ուղելուս համար կը
 խօսիմկոր: Հա չեմ խորհիր թէ դու
 գողես կամ յափշտակող, բայց բը-
 նաւ չջանացի՞ր մի քու ծախած ապ-
 բանքիդ մէկ պակասութիւնը ծած-
 կել կամ պահել, երբոր զիտէիր
 թէ անոր պակասութիւնը ծածկելու
 յատուկ պատճառ եղաւ ծախու
 առնողը յօժարեցունելու: Վանա-
 ւանդ՝ շատ անգամ չգովեցի՞ր մի
 քու ապրանքդ անանկ երկդիմի
 խօսքերով, որ իրաւունք չէր այն-
 պէս ընել: Ո՞իթէ ան ապրանքը
 որն որ ծախողը իր չքաւորութենէն
 ստիպուած կրծախէր, անոր արժու-
 զութենէն շատ պակաս չառի՞ր մի:

Ահա ասո՞ք անշուշտ պիտի վը-
կայեն քեզի համար :

Վ. · Տէր այդ կերպով դատելու
ըլլաս , բոլոր աշխարհը կըդատա-
պարտես . ինչու որ քու խօսքիդ
նայելով բարի մարդ մը չկայ երկրի
վրայ :

Ք. · Վս խօսքը չէ թէ ես ինքիր-
մէս կըհնարեմ , այլ յատկապէս
Վստուածաշունչը այսպէս կըսէ .
թէ “Ո՛էկը չկայ՝ որ բարի բան
ընէ . և բնաւմէկ հատ մըն ալ չկայ”:
Հառնք . գ . 12 :

Վ. · Ուրեմն ուրախ եմ որ դուն
դիս իմ ընկերներէս առելի դէշ չես
սեպեր , և կըյուսամ որ ինծի նոյն-
պէս պիտի ըլլայ , ինչպէս որ ու-
բիշներուն . քանզի ամէնքը մեղա-
ւոր են :

Ք. · Ե՞ս վասն այսորիկ կրկապծես
որ պէտքը չէ յոսատհատիլ , թէ

դուն ալ մեղաւոր ես . Հապա յօյս
 ունիս որ դուն ալ պիտի փրկուիս :
ԱԵ որ այսպիսի խորհուրդ քու
 սրտիդ խորութեանը մէջ պահ-
 ուածէ : Բայց ըսէ ինծի , բաղմու-
 թիւնը ու մինակութիւնը ի՞նչ տար-
 բերութիւն ունի Աստուծոյ առ-
 ջևը , որուն ամենատես աչքէն մէկը
 չկրնար պահութիլ , կամ անոր
 ձեռքէն աղատիլ : Եթէ Առդօմի
 մէջ եղած ըլլայիր կամ զրհեղեղի
 ատենը , աս նոյն խորհուրդը իր
 քաղցրութեամբը քեզ ալ պիտի
 քնացուներ ան զօրաւոր մեղքե-
 րուն մէջ , որոնք անատենի մար-
 դիկը փճացուց , բայց չպիտի ապրե-
 ցունեփ քեզ ան կրակէն ու զրհե-
 ղեղէն՝ որ բոլոր մարդկային ցեղը
 կորսնցուց :

Ա . Այսպէս դատելով բոլոր աշ-
 խարհը կըդատապարտես :

Ք. · Դատապարտել , ի՞նչ է
այդ դատապարտել բառը . այդ կը
նշանակէ դատել ու վճռել յաւի-
տենական տանջանքին համար , որն
որ մինակ արդար դատաւորին կը
վայլէ ընել : Ես բոլոր սրտովս կու-
զեմ որ ամէն մարդիկ աղատին աս-
թշուառութենէն ու կորուստէն՝ որ
գալու է . և ատոր համար հիմայ
քեղի հետ կըխօսիմ պարզապես ու
ճշմարտապէս , և Աստուծոյ խօս-
քին պէս :

Ա. · Ուրեմն ովկ կընայ ապրիլ .
և ոչ դուն ինքդ ալ : Կաղաչեմ
տէր , ըսէ ինձի՞ դուն բնաւ մեղք
չգործեցի՞ր մի :

Ք. · Բարեկամ , ծաղը մի՛ ըներ .
վասն զի այդ բանը՝ որուն վրայ կը
խօսինք , շատ հարկաւոր է : Ես ալ
քեղի պէս մեղք գործեր եմ . ես
մեղաւորներուն գլուխն եմ , ու իմ

մեղքերս յաւիտենական դատաւ
 պարտութեան արժանի են . բայց
 Աստուած իր անձառ ողորմու-
 թեամբը կամեցաւ զիս արթնցու-
 նել որ ապաշխարեմ . և ցուցուց
 ինծի իմ վտանգս ու կորուստս , և
 լուսաւորեց իմ խաւարեալ միտքս
 ու շարժեց իմ թմրած հոգիս՝ որ
 փախչիմ գալու բարկութենէն :
 Այս ցուցուց ինծի իր օրհնեալ
 Աւետարանին . մէջը ան բացուած
 ճամբան , որ անոր մէջէն վազելով
 փրկուիմ յաւիտենական մաշէն ,
 որ մեղաց պտուղն է : Հայութ . դ . 23 :
 Ես յօյս ունիմ որ Աւետարանին
 մէջը յայտնուած փրկութիւնը ըս-
 տացած եմ , և մեղաց թողութիւնը
 ընդունած եմ Քիսուս Քրիստոսի
 հաւատքովը :

Ա . Կըյուսամ թէ ես ալ կա-
 պաշխարեմ . վասն զի ամեն ատեն

որ զԱստուած կըքարկացունեմ ,
յետոյ կըդղամու կըցաւիմ անոր
համար : Եւ հաւատքի համար կը-
սես նէ , ինչու չպիտի հաւատամ ,
որ մենք ամէնքս ինչպէս որ կըյու-
սամ քրիստոնեայ ենք , մի թէ
չե՞նք մի :

Ք . Թէ որ քու զդղալդ սրտանց
և ուղիղ ըլլայ , ու քու հաւատքդ
կենդանի և ճշմարիտ ըլլայ , անա-
տենը վտանգ մը չկայ քեզի , և ե-
րանելի է քու կեանքդ ու վիճակդ :
Իայց շատ մարդիկ իրենց անձինքը
խաբած են մեռած հաւատքով ու
թերի ապաշխարութիւնով : Արդ՝
կուզե՞ս որ հիմայ քու հաւատքդ ու
ապաշխարութիւնդ փորձուին :

Ա . Այս . կուզեմ . ինչու որ
փորձելն բնաւ բան մը չկրնար ընել
ինձի : Թէ որ ես անվախ ու անվր-
տանդ եմ , լաւ է փորձել . ապա

թէ չէ , յոյս ունիմ որ հիմայ ալ
շատ ուշ չէ ապաշխարել , ու իմ
ապաշխարութիւնս լցունել :

Վ . Շ ատ աղեկ կըսես . ուրեմն
առաջ քու ապաշխարութիւնդ
քննենք . ճշմարիտ ապաշխարու-
թիւնը ան է որ մեղքը ու անոր գար-
շելի և պիղծ ըլլալը սրտովդ իմա-
նաս , և միշտ մտքիդ մէջը ունենա-
լով ան՝ ատես : Հետոյ քու անձդ
մեղքով ապականած անսնելով՝
քեղմէ զզուիս ու միշտ ջանք ընես
մեղքէն հեռու կենալու համար , և
սկսեսնոր կեանք մը վարել ճշմար-
տապէս դէպի Աստուած դառնալով :
Արդ՝ քու ապաշխարութիւնդ այս-
պէս է թէ չէ :

Ա . Կըյուսամ որ այդպէս է :

Վ . Անդաց պտուղը մահ է , և
յաւիտենական մահ . ուրեմն միտքդ
դրի՞ր մի որ աս մահին . արժանի ես :

Ա. Ես այնչափ միտքս դրած եմ,
որչափ որ ուրիշները ։ Վասն զի ա-
մէնն ալ մեղաւոր են ։ բայց Աստ-
ուած ողորմած է :

Ք. Դուն հիմայ ուրիշներուն
համար մի՛ խօսիր, քեզի համար
ըսէ՛թէ կըխորհի՛ս մի որ յաւիտե-
նական մահին արժանի ես :

Ա. Օէ որ Աստուած անսուտ
արդարութեան նայելով վարուի
ինծի հետ, այո՞ արժանի եմ յա-
ւիտենական մահուան ։ բայց ինչ-
պէս որ կըհաւատամ թէ Աստուած
ողորմած է, անանկ ալ կըյուսամ
որ չպիտի դատապարտուիմ :

Ք. Կըլախնամ որ այդ քու
Աստուծոյ ողորմութեանը համար
ունեցած կարծիքդ ճշմարիտ ա-
պաշխարութիւնը խափանէ : Կերևի
թէ ողորմութեան յոյս ունիս, որ
դեռ կատարելապէս չես իմացեր՝

թէ որչափ ողորմելի ու բոլորովին
 աղքատ ես, և թէ առանց Աստու-
 ծոյ ողորմութեանը պիտի կորսուիս .
 և թէ վիրաւորուելէն առաջ յոյս
 ունիս բժշկութեան դեղ ընդու-
 նել : Ատ ան է՝ որ Ամենակալ Տէրը
 կանուանէ , “Ա եր ’ի վերոյ իր ժո-
 ղովուրդին վէրքը բժշկել” . Երեմ .
 Ղ. 14 . և Ղ. 11 : Հիմայ կերեի որ
 ասով դու քեզ խաբած ես . վասն
 զի բնաւ չտեսար որ մեղաց ու մա-
 հուան վիճակին մէջն ես . բնաւ ա-
 տելի չերեցաւ քեզի մեղքը . և
 բնաւ չվախցար քու անձիդ կորուս-
 տէն , և կամ չխոստովանեցար թէ
 ամենեին օգնութիւն կամ կարո-
 ղութիւն չունիս դուն քեզմէ . և
 վասն այնորիկ բնաւ չփախար ա-
 նոր քով՝ որ դատապարտութենէ
 աղատող է : Եւ թէ որ բնաւ Քը-
 րիստոսի քովը փախած չես անօդ-

Յական ու ապականեալ մարդու մը
պէս, յայտնի է որ փրկութեան
յոյս մը չունիս անկէց : Տես ի՞նչ
պէս եղաւ ան առաջին հաւատա-
ցեալներուն՝ որ առաքեալները կը
յիշեն “Աոր Կտակարանին մէջ, թէ
Պետրոսին ականջ դնողները որ-
քան սրտանց զղջացին ու ըսին,
“Մարդիկ եղբայրներ՝ ի՞նչ ընենք”:
Գարծ. բ. 37: “Աոյնպէս և բան-
տապետը երբոր իր ողորմելի վի-
ճակը ճանչցաւ, դողալով եկաւա-
ռաքելոց ոտքը ինկաւ իր մկրտուելէն
ու մեղաց թողութիւն ընդունելէն
առաջ : Գարծ. ժղ. 29: Եւ Պո-
ղոս ալ գետնի վրայ ինկաւ : Գարծ.
թ. 4:

Ա. Անոնք ամենքն ալ անհաւատ
էին. բայց ես իմ մանկութենէս
մկրտուեցայ, և բարին ճանչնալու
2 ֆ

Համար կրթուեցայ, ու միշտ կըհաւատայի :

Վ. Աստուած ամենուն հետ մէկ
կերպով չվարուիր, բայց զբոյշ կե-
ցիր որ քու յոյսդ դրսի բաներուն
վրայ չդնես : Այսդ է որ քու ման-
կութենէդ մկրտուեցար, բայց
քննէ քու սիրտդ ու կեանքդ թէ
արդեօք աշխարհիս մէջ զլաստուած
չունեցողի մը պէս չապրեցա՞ր մի :
Ո՞հ թէ աշխարհը մարմինը և
Աստանան ու անալուդ տեղը,
աշխարհիս կամքերուն չըհետեւե-
ցա՞ր մի շատ բաներ մարդոց կար-
ծեացը պէս դատելով ու Աս-
տուծոյ խօսքին դէմ հակառակե-
կելով : Ո՞հ թէ շատ անգամ աշ-
խարհի ձայնին աւելի մտիկ չըրի՞ր
մի քան թէ Աստուծոյ ձայնին, և
աշխարհի սովորութեանը պէս չը-
վարուեցա՞ր մի Աստուծոյ պատուի-

բանքին դեմ երթալով ու գործելով : Այի թէ շատ անգամ քու
 մարմնաւոր ցանկութիւններուդ չը-
 հետեւցա՞ր մի Աստուծոյ սուրբ օ-
 րէնքը բանի տեղ չդնելով ու աւ-
 րելով . և թէպէտ յայտնի յան-
 ցանք մը չգործեցիր ալ նէ , բայց
 չար խորհուրդներ քու սրտիդ մէջը
 չպահեցի՞ր մի . և պղտիկ մեղքերուն
 համար բնաւ անհոգ չեղա՞ր մի : Եւ
 չէ՞որ շատ ատեն յատկապէս Այ-
 տանան իշխան եղաւ քու վրադ , ու
 կրդրդէր քեզ որ զԱստուած բար-
 կացունես ու անոր սուրբ անունը և
 սուրբ օրը պղծես , և ան ալ այնպիսի
 փուծ հեշտութեանց համար՝ որ
 յայտնի կրցուցընեն թէ Այտանան
 տիրապետած է քու վրադ ու կիշ-
 խէ : Եւ չէ՞որ դեռ այդ մեղքերուդ
 մէջը մնացած ես քիչ հոգ տանե-
 լով , կամ իսպառ հոգ չընելով քու

Հոգիիդ փրկութեանը համար . ու
յոյս ունիս որ պիտի փրկուիս : Եւ
հիմայ ալ քու կենցաղավարու-
թիւնդ նոյնպէս չէ՞ մի . ահա կը
տեսնեմ որ դուն ճանչնալով կը
խոստովանիս թէ այնպէս է : Ու-
րեմն հիմայ յայտնի չէ՞ մի որ այս-
պէս՝ քու մկրտութիւնդ օգուտ մը
չունի քեզի . և որշատ հարկաւոր է
քեզի որ դէպի Աստուած դառնաս
ու ամէն բան նոր՝ ի նորոյ սկսես :

Ա . Ի՞նչպէս պարտիմ նորէն ըս-
կըսիլ :

Ա . Ճ'անչնալով ու խոստովա-
նելով , թէ Աստուծմէ հեռանա-
լովդ քեզ մեղաց ու թշուառու-
թեան մէջ ձգեցիր . քանզի Աս-
տուծմէ հեռացար ու դէպի չարը
հակամիտեցար , և անոր համար
սրտով թշնամի ալ եղար Աստու-
ծոյ . և թէ իսպառ թաղուած ես

մեղաց մէջ ու արժանի ես բարկութեան, և կործանման ծայրը կայնած ես քու յանցանքներովբ ծածկուած :

Ա. Հ ատ կուզեմ որ բոլորովին թողում մեղքը, դառնամ դէպի Աստուած, և ունենամ բարի կեանք մը :

Վ. Ասոնք բարի խորհուրդներ են, բայց կերևի թէ ուղիղ սկըզբունքներէ չեն բղխիր. վասն զի կը տեսնեմ որ կուզես մեղքդ թողուլ, և արդարութիւն գործել. սակայն ծածուկ կերպով մը քու անձիդ ուղղութեանը ու բարի գործքերուն վրայ կըդնես քու յոյսըդ, իբր թէ անոնք կրնան ընդունելի ընել քեզ, ու Վրիստոսի հետ մասնակից : Այդ սովորութիւնը անոնցն է, որ ճշմարտութենէն հեռացած են ու մոքով խա-

ւարած . և անոր համար իրենց կա-
րողութեանը վստահանալով՝ կու-
ղեն իրենց արդարութիւնը հաս-
տատել , (Առաջ . Շ . 3 .) և չէ թէ
Վրիստոսինը : Խայց երբոր խոս-
տովանիս թէ մեղքով լեցուն՝ դար-
շելի ու անպիտան ես , և Հօրայ
նման քու անձեղ զգուած , երբոր
ճանչնաս ու խոստովանիս թէ ընաւ
ողորմութիւն գտնալու ալ արժանի
չես՝ ոչ ալ կարող դուն քեզմէ
բարի բան մը ընել , երբոր ոչինչ
սեպես քու խիստ շատ բարի գործ-
քերդ ալ , որ մեղքով ապական-
ուած են , և քու անձդ Աստուծոյ
առջին խոնարհեցունես մէկ կոր-
սուած ու անօդնական մեղաւորի մը
պէս , որ ընաւ յոյս չունի իր ան-
ձին վրայ , հապա միայն Հիսուս
Վրիստոսի ձեռքովը կատարուած
փրկութեան աւետիսովը իր սիրալ

կլոմիսիթարէ , Երբոր աս ըսուած
բաները չէ թէ մինակ քու լեզուիդ
դաւանութիւնն են , այլ ճշմար-
տութիւնով քու սրտիդ խորու-
թեանը մէջ տպուած ու հաստատ-
ուած են , և Երբոր աս ամէնը տես-
նեմ , անառենը կը հաւատամ որ .
յատուկ շնորհաց գործ մը սկսերէ
քու հոգիիդ մէջը :

Ա . Ա . ի՞նչ է , քու խրատդ
դէպի յուսահատութիւնը կը տա-
նի զիս :

Ա . Ա . յ , կուղեմ որ յուսա-
հատիս քեզմէ եղած ամէն օդնա-
կանութենէն ու ամէն գործքերէն ,
որոնց վրայ քու յոյսդ դրած ես .
վասն զի մինչեւ որ անանկ չընես ,
այնչափ աղէկ չես կրնար պատուել
Դ . Յ . րիստոս՝ ինչպէս որ արժան է .
և չես փախչիր անոր քովո մի միայն
քու Փրկիչիդ պէս . որ եկաւ գերի-

ներուն թողութիւն քարողել , ու
սրտով խոցուածները բժշկել :
Դ . Պ . 19 :

Ա . Կարծեմ թէ աս ամենը մէկ
խիստ շատ չարագործ մեղաւորի
կամ կռապաշտի հարկաւոր են .
քայց ևս միշտ քիչ թէ շատ լստու-
ծոյ վախովը կրվարեմ իմ կեանքս ,
միշտ եկեղեցի կերթամ և միշտ կը
հաւատամ :

Յ . Հ . իտակը ըսելով քեզի՝ կը
վախնամ որ դուն բնաւ չհաւտա-
ցիր ինչպէս որ արժան էր . և ասոր
համար շատ բան ունիմ քեզի խօ-
սելու ուրիշ անգամ : Հիմայ յայտ-
նի է որ քու ապաշխարութիւնդ
ճշմարիտ չէ . վասն զի դուն բնաւ
շտեսար ու չիմացար քու անձիդ
կորուստը , և վասն այնորիկ չկրցար
քու բոլոր սրտովդ փափաքիլ որ
աղատիս անկից ինչպէս որ պէտք է :

Եւ աս պատճառաւ միշտ քու անձդ
խաբեցիր , յուսալով թէ քու վի-
ճակդ բարի է , կամ յատկապէս
բարի ըլլալու է , թէ որ միայն քիչ
մըն ալ աղէկ կենցաղավարութիւն
ունենայիր : Ահա աս քու յոյսդ
քու անձիդ վրայ՝ ճշմարտապէս
մեղք է . բայց ապաշխարութեան
ուրիշ նշաններուն նայելով ինչ-
պէս մեղքէն հեռանալուն , դու լաւ
դիտես որ առանց հոգ տանելոյ
քանի մը սովորական մեղքերու
մէջ կապրէիր .. և դէպի Աստուած
դաւնալոյն կողմանէ ալ յայտնի է
որ չդարձար Աստուծոյ . ինչու որ
ընաւ չգիտցար ու չիմացար՝ թէ
քու ցանկութիւններուն հետեւելով
հեռացած ես իրմէն :

Իրաւ որ (թէպէտ կերեի թէ
դուն չես դիտեր ան ,) ան խանգա-

ըեալ բնութիւնը՝ որ դու ու ամեն
 մարդիկ ունին, անանկ բնութիւն
 մընէ, որ անկից մեղք ու ապակա-
 նութիւն դուրս կուգայ: “Դու Աս-
 տուծոյ կամքը խնդրելոյդ տեղը,
 քու կամքդ կատարել ուղեցիր, որ
 քու ապականեալ բնութիւնդ մար-
 մաւոր ուրախութիւնով ու հա-
 րստութիւնով, աշխարհային պա-
 տուով ու հանգստութիւնով” և ա-
 սոր նման ուրիշ բաներով ուրա-
 խացունես, ահա աս էր քու բոլոր
 կենցաղավարութեանդ յատուկ դի-
 տաւորութիւնը, որ հակառակ էր
 ան պատուիրանքին ըսածին՝ թէ
 “Ամեն բան Աստուծոյ փառքին հա-
 մար ըրէք”: ա . Կոքնլ . Ժ . 31 :
 Անաւանդ թէ քու անձդ աղէկ
 քննելու ըլլաս, քու սրտիդ մէջը
 յատուկ թշնամութիւն կըդտնաս
 գէպի առ Աստուծ, և Առաքեալն

ալ կըսէ , թէ՝ “Վարմինին խորա-
 հուրդը թշնամութիւն է առ Աստ-
 ուած” : Հասման ը . 7 : Եւ աս թշնա-
 մութիւնը , յայտնի կըցուցընէ իր
 Աստուծոյ կամքին դէմ կենալը
 ան բանը ընել տալով որն օր ա-
 նիկա արդիլեց , և ան բանը չընել
 տալով որն օր անիկա ընել պատ-
 ուիրեց . Նաև փախչելով Աստուծ-
 մէ իբրև մեր թշնամիէն , և ջանա-
 լով օր քու անձդ պահես իրմէն ,
 ինչպէս որ Ադամ ըրաւ : Արդեօք
 բնաւ օրեր կամ շաբաթներ չան-
 ցուցի՞ր մի առանց մտածելու Աս-
 տուծոյ վրայ ջերմեռանդութեամբ
 սրտի , թէև միշտ [և] անխափան ա-
 նոր ձեռքէն ողորմութեան շնորհք
 ընդունեցիր . մի թէ այսպիսի խոր-
 հուրդները մէկ դի չձգեցիր ու չա-
 տեցի՞ր մի , երբոր քու միտքդ կու-
 դային . արդեօք Աստուծոյ և յա-

ւիտենական կենաց կամ պատժոյ
 համար խորհելէն բնաւ չփախար
 մի՝ որպէս թէ քու խաղաղութիւնդ
 շուզով թշնամիներէն, ու չնղեւ-
 ցի՞ր զանոնք աշխարհային հոգերով
 դատարկ խօսակցութիւնով՝ ունայն
 խաղերով և ուրախութիւնով :
 Արդեօք աս կերպովս բնաւ Եպ-
 տուծմէ չփախար մի, այո՛, դու ա-
 ղէկ գիտես որ Ճշմարիտը կըսեմ
 քեզի : Ուրեմն թողութիւննորհէ-
 ինծի որ համարձակ խօսիմ քեզի
 հետ . ինչու որ մինչև հիմայ մոլո-
 րած պըտըտեցար ու քու անձիդ
 կորուստը չճանչցար . քու անձդ
 խաբեցիր, և քու հոգւոյդ հետ
 խաղաղութիւն կըխօսէիր՝ դեռ
 քանի որ խաղաղութիւն չկար :
 Երդ՝ եկոր հիմա ու մտածէ ան ա-
 մէնը որ ինծմէ լսեցիր, կարդա
 Եպտուածաշունչ Առը Կիրքը, և

աղաչէ Աստուծոյ որ շնորհք տայ
քեզի՝ որ քու իսկական վիճակդ
ճանչնաս ու ամեն կերպով ուղիղ
դատաստան և քննութիւն
ընես :



ԵՐԿՐՈՐԴ ԽՕՍԿԵՑՈՒԹՅՈՒՆ



Ք. Բարեկամ, ես յոյս ունեի
քեզ ասկից առաջ տեսնել, որ մէջ
մըն ալ խօսինք ան շատ հարկաւոր
բաներուն վրայ :

Ա. Արդարեւ տէր, թէ որ հա-
մարձակիմ ճշմարիտը խոստովա-
նիլ, պէտք է ըսեմ որ ան քու ըսած
խօսքերդ այնքան չսիրեցի որ ցան-
կայի անդամ մըն ալ լսել զանոնք :
Եւ հիմա ալ քու քովդ չէի դար,
բայց միայն ան բանին համար որն

որ մէկան օր քու քարոզութեանդ
մէջը լսեցի :

Վ. Խիստ շատ կըհաւնիմ այդ
քու պարկեշտ համարձակութեանդ
սիրելի . բայց ի՞նչ էր ան՝ որով
ես քեզ տրտմեցուցի :

Ա. Ես կարծեցի որ դու խիստ
սաստիկ յարձակեցար իմ վրաս . և
շատ վախցայ որ չըլայ թէ իմ բո-
լոր սիրտս տրտմութիւնով լեցու-
նես :

Վ. Չե՞ս կարծեր որ ամէն ինչ
որ քեզի հետ խօսեցայ նէ , քու
հոգիիդ փրկութիւնը ուղելէն շար-
ժուած խօսեցայ :

Ա. Այո , կըհաւատամ որ ճըշ-
մարտապէս սիրով շարժուած խօ-
սեցար :

Վ. Կըկարծե՞ս մի որ խօսածնե-
րուս մէջը սուտ բան մը կար :

Ա. Այո , անատենը անանկ կը

սեպէի , ինչու որ կերևնար ինձը
թէ շատ խստութիւնով դատեցիր
զիս , և ամէն գէշ մարդոց հետ հա-
ւասար սեպեցիր զիս . բայց հիմայ
յայտնի իմանալով կըխոստովա-
նիմ՝ թէ ինչ որ ըսիրնէ , ամէնն ալ-
ճշմարիտ էր :

· Ք . Ուրեմն ի՞նչ բան քու խոր-
հուրդներդ այսպէս փոխեց :

Ա . Ո՞էկալ օրուան քու տուած
քարովդ . որ ան ահաւոր դատաս-
տանին օրուանը վրայ ըլլալով ,
շատ խոռվեցայ՝ երբոր լսեցի . վասն
զիշատ կը վախնամ որ դատաստա-
նին վերջին օրը շուտով հիմայ հաս-
նի ու զիս անպատճաստ գտնէ : Եւ
անատենը ի՞նչ պիտի ընեմ . միայն
աս կընամ ըսել , թէ Տէր , ողորմէ
իմ խղճալի հոգիիս :

· Ք . Ե՞նատենը շատ ուշ է որ ա-
ղաչս և ողորմութիւն դտնել յու-

սաս ւրայց մամնաւորապէս ան ի՞նչ
էր որ շարժեց քեզ այդ կերպովը
դատել քու անձդ :

Ա. Ան խօսքը՝ որն որ դու ցոյց
տուիր . Ոտակն . ին . գլխէն , թէ
դատաստանին օրը արդարները մե-
ղաւորներէն պիտի զատուին , և թէ
աս զատուիլն աս աշխարհիս մէջ
եղած է , երբոր արդարները զատ-
ուած ու հեռի են մեղաւորներուն
գործքերէն ու ընկերութենէն :
Իւայց ես իմ մէջ ասանկ փոփոխու-
թիւն մը չեմ գտներկոր . և վասն
այնորիկ շատ կը վախնամ որ չըլայ
թէ դեռ ան մեղսալից վիճակին մէ-
ջը եղած ըլլամ որուն մէջ ամէն
մարդիկ ընականարար կը մնան , ինչ-
պէս որ դու ըսիր :

Վ. : Կ ատ իրաւունք ունիս վախ-
նալու . ձեզի ըսի (ա) , թէ Ան օրը
միայն անոնք արդար կը սեպուին ,

որ արդարութեան ցանկալով փաստան Հիսուս Քրիստոսի քովը , որով արդարանան ու փրկուին . որ Աստուծոյ Նորիովը սրբուեցան . որ սիրաերնին նորոգուեցաւ . և որ սուրբ կենցաղավարութիւնով յայտնի ցուցը ին աս մեծ փոփոխմունքը իրենց մնացած կենացը մէջ՝ թէ և իրենց մեղքերը շատ ու մեծ էին : Եւ թէ (ը) Ան օրը մեղաւոր անոնք կըսեպուին , որ ապրեցան ու մեռան առանց Քրիստոսի կենդանի հաւատքին . և որ Աստուծոյ Նորիունեցին իրենց սրտերուն մէջ՝ թէև իրենց կենցաղավարութիւնը շատ պարկեցտ էր գրսուանց ու բարեգործ :

Ա . Երան այդ էր որ զիս վախով լեցուց . վասն զի ըսիր՝ թէ Աարդմը որչափ բարեգործ ըլլայ , տակաւին անիկա ալ մեղաւոր է և ար-

ժանի դատապարտութեան, թէ որ
առանց հաղորդութիւն ունենալու
Քրիստոսի հետ, և առանց ընդու-
նելի ըլլալու Աստուծոյ առջեր
Քրիստոսով արդարացած՝ մեռ-
նելու ըլլայ: Եւ թէ աս ողորմու-
թիւնը ու աս ընդունելի ըլլալը Յի-
սուս Քրիստոսի ձեռքով՝ թէ որ
մէկը իր մեռնելէն առաջ ստանա-
լու ըլլայ, ալ անոր մեղքերի չեն
յիշուիր ան մեծ օրը: Եւ աս բանը
հաստատելու համար դու մեզի ցու-
ցըցիր՝ թէ վերջին օրը, ինչպէս
Վատթէոս Աւետարանիչը կրպատ-
մէ, արդար Կատաւորը ընաւ մար-
դոց մէկ մեղքը չպիտի յիշէ, ոչ
ալ ամբարիշտ մարդոց մէկ բարի
դործը :

Ք. Ան ամբարիշտները որ կապ-
րին ու կըմեռնին առանց ճանչնալց
խոնարհութեամբ իրեաց ընական

ապականութիւնը ու գործած մեղ-
 քերնին, անանկ որ բնաւ հաւատ-
 քով չդիմեցին դէպի Աստուծոյ ո-
 ղորմութեանը՝ որ Վրիստոսով
 պատրաստուած է, իրաւ կըսեմ որ
 այնպիսի ամբարիշտները բնաւ յի-
 շուելու արժանաւոր բարի գործ մը
 չունին. վասն զի ինչ որ անոնք
 կընեն՝ ծուռ դիտաւորութիւններէ
 գուրօ կուգայ. ինչու որ կամ անձ-
 նասիրութեան և աշխարհական
 ցանկութեանց համար կընեն, և
 կամ Վրիստոսի հետ հաղորդու-
 թիւն մը ունենալու, ու իրենց մեղ-
 քերուն իրենց գործքերովը Աստու-
 ծոյ առջել թողութիւն ստանալու
 համար. որ յայտնի կըցուցընեն՝ թէ
 փրկութիւնը օրէնքին գործքերէն
 կուզեն ստանալ: Եւ անոր համար
 իրենց գործքերը ոչինչ կըսեպուին.
 ինչու որ հաւատքով չգործուեցան,

ու սիրոյ աղբիւրէն չըղիսեցան , և
 մէկը կարող չէ լուստուծոյ ընդունե-
 լի բարի գործ մը գործել , թէ որ
 Վրիստոսի հետ միաւորուած չըլ-
 լայ , որ անիկա է միայն ճշմարիտ
 որթը , ու հաւատացեալները ուռ
 են , որ անկից կեանկը կընդունին ,
 ու պտուղ կուտան : Յօհ . ժե :
 Իայց մէկալ կողմանէ արդարները՝
 որ ընդունելի եղան Վրիստոսով ,
 անոր համար իրենց մեղքերը ալ
 չեն յիշուիր . վասն զի շատ ժամա-
 նակ առաջ թողուեցան ու ջըն-
 ջուեցան , և իրենց կիսկատար ծա-
 ռայութիւնները ընդունելի կը լլան
 իրենց Վահանայապետին Յիսու-
 սի ձեռքովը , որ անոնց անօրէնու-
 թիւնները իր վրայ . առաւ , և ձրի
 շնորհօք կարդարանան առատա-
 պարգև Վատաւորին առջել : Ու-
 րեմն աս կերպով կը լատուին ար-

դարները մեղաւորներէն . մէկը մէ-
 զաց թողութիւն կըդտնայ և ըն-
 դունելի կըլսայ ՚Վրիստոսով ար-
 դարի պէս , ու մէկալը բնաւ չճանչ-
 նալով կատարելապէս իր մեղան-
 չական ու կորստական վիճակը , և
 ամբարտաւանութեամբ չխոստո-
 վանելով իր ոչինչ ու մեղաւոր ըլ-
 լալը , դուրս կըճգուի : Անիկա՞ որ
 Աւետարանին մէջ յայտնուած ո-
 ղորմութիւնը ու փրկութիւնը խնդ-
 րելու չհետեւիր , և օրէնքին գործ-
 քերովը արդարանալ կուղէ , ան-
 շուշտ դատաստանին օրը պիտի
 դատուի օրէնքին պայմանովը , որ
 կատարեալ հնաղանդութիւն կը
 պահանջէ , և չէ՞նէ կըդատապար-
 տէ : Ա ասն որոյ անիկա առանց
 միջնորդի մնալով և մեղաց թողու-
 թիւն չդժնալով պիտի դատապար-
 տուի :

Ա . Տե՛ս որ այդպէս է , ուրեմն
բնաւ պէտքը չէր մեր գործքերը
յիշուին :

Ք . Եյդ բանին համար երկու
պատճառ առաջ կըքերեմ քեղի .
առաջ՝ թէ և գործքերը հիմն ու
պատճառ չեն , որով մարդս փըր-
կուի և ընդունելի ըլլայ , բայց ա-
նո՞նք յատկապէս կըցուցընեն՝ թէ
արդեօք մարդս արդարացած վի-
ճակին մէջն է² , թէ չէ . վասն զի
թէ որ մենք Քրիստոսի վրայ հաս-
տատուած չըլլանք , մենք մեղմէ ա-
մենեին սրբութեան պտուղ չենք
կընալ ունենալ , անոր համար
պարտինք սրբութեան պտուղ բե-
րել , որ ճշմարտապէս գիտցուի թէ
մենք Քրիստոսի մէջ հաստատուած
ենք . ինչպէս որ մեր Տէրը կըսէ .
“ Դմ մէջս կեցէք՝ ու ես ձեր մէջը .
ինտոր որ ճռւղը ինքիրմէն չկընար

պտուղ բերել , թէ որ որթին վրայ
 հաստատուած չըլայ . ասոր պէս
 գուք ալ թէ որ իմ վրաս հաստատ-
 ուած չըլաք” : Յօհ . ժէ . 4 : յլուստի
 անոնիք որ իրենց կեանքը արդա-
 րութեամբ ու սրբութեամբ չեն
 վարեր , իրենց անձերը կըխարեն
 ինքըղինքնին արդար սեպելով .
 Քանզի բարի գործքերն են յատուկ
 նշան՝ որ կըզատէ հաւատացեալնե-
 րը անհաւատէն : Երկրորդ՝ բարի
 ու օգտակար գործքերուն զանազան
 աստիճանները արդարներուն մէջն
 ալ տարբերութիւն կընեն . անանկ
 որ Աստուծոյ ողորմութիւնն ալ կը
 հաճի զանազան փառքի աստիճան
 բաշխել անոնց : Եւ ամէն մէկուն
 փառքին աստիճանը , իր տուած
 պտուղին՝ ու ջերմեռանգութեամբ
 Աստուծոյ այդիին մէջ աշխատե-
 լոյն նայելով կըշափուի ու կըհա-
 տատուի :

Ա. Ես միշտ կը կարծէի՝ թէ մենք
 քրիստոնեաներս ամենքս ալ ճըշ-
 մարիտ հաւատացեալներ ենք, և
 թէ մեր մէջը բնաւ դանաղանութիւն
 չկայ, և թէ դատաստանին օրը ա-
 նոնք միայն կը սեպուին արդար՝ որ
 իրենց կեանքը օրինաւոր կերպով
 սրբութեամբ ու բարեգործու-
 թեամբ անցուցին . ես ինքը լինքս
 անոնց մէջը ըլլալ կը կարծէի, և ան
 ամենուն մէջն ալ՝ որ ինծմէ աւելի
 աղեկ էին . և թէ պիտի դատա-
 պարտուին միայն ան ամբարիշտնե-
 րը ու անհաւատները՝ որ չարա-
 խորհուրդ էին : Յիրաւի միշտ քիչ
 մը վախս ունէի՝ թէ այնքան բարի
 չեմ որքան որ պէտք էր ըլլայի, և
 չի դիտեր որչափ մարդիկ արդար
 պիտի սեպուին, բայց կը կարծէի
 թէ իմ վիճակս շատերուն՝ և զրեթէ

իմ ամէն ճանչցածներուս վիճակէն
աւելի աղէկ է :

Վ. · Ետ քու մտածմունքդ Ես ~
տուծմէ սորուած չես . և հիմայ չե՞ս
տեսներ որ ան սխալ է :

Ե. · Հիմայ կըտեսնեմ թէ քանի
որ աս աշխարհիս մէջն եմ պարտիմ
բոլոր իմ մեղքերուս համար ողոր~
մութիւն ու թողութիւն զտնելու
ջանալ չէ թէ իմ գործքերուս ար~
ժանաւորութիւնովը՝ որ բան մը
չեն արժեր , հասյա Հիսուս Քրիս~
տոսի հաւատքովը : Բայց առ հա~
ւատքը ի՞նչ է՝ չեմ գիտեր . աս գի~
տեմ որ ես ճամբէն դուրս ելած
էի :

Վ. · Երաւցունէ ելած էիր , և հի~
. մայ հասած է ժամանակը՝ որ ար~
թըննաս , ու ջերմեռանդ սրտով
Տէրը խնդրես , որ ըլլայ քեզ մէջ
տեղէդ կտրէ ու քու բաժինդ ան~

Հաւատներուն հետ դնէ , ուր ոյք
լայն ու ակռաներու կճռտելն է :

Ա . Կաղաչեմ տէր , ըսէ ինծի՝
ի՞նչ ընեմ որ փրկուիմ :

Վ . Ի՞նչ կըխորհիս քու ան-
ցուցած կեանքիդ վրայով :

Ա . Կըտեսնեմ որ ամէնօր զԱս-
տուած բարկացուցի՝ իր պատուի-
րանքները կոտրելով , և իմ կամքս
ու չէ թէ իր կամքը կատարելով , և
արդէն հազարաւոր մեղաց պատի-
ժի տակն ինկած եմ , որ անոնց շատ
պզտիկը բաւական է զիս դատա-
պարտել , թէ և ուրիշ մեղք մըն ալ
ըրած չըլլայի :

Վ . Ուրեմն ի՞նչ կըխորհիս քու
բարի գործքերուդ վրայ :

Ա . Ի՞նչ խորհիմ , մինակ մեղք
կըտեսնեմ իմ ամէն գործքերուս
մէջը . վասն զի ամբարտաւանու-
թիւնս , որով ես զիս քան զուրիշ-

Ները աւելի բարեգործ կըսեպէի ,
իմ աշխարհասիրութիւնս , իմ ըն-
դունայն բաներուն ցանկալս , և իմ
մտքիս ցրուիլը թէ աղօթքի մէջ և
թէ քարող լսելուս ատենը բաւա-
կան են զիս . դատապարտելու՝ թէ
և ուրիշ մեղք մը գործած չըլլամ :

Վ . Աւրեմն ի՞նչ կուղես ընել :

Ե . Կուղեմ որ աւելի աղէկ
կեանք մը վարեմ , մեղաց հետ
կոռւիմ ու աղօթք ընեմ :

Վ . Ի՞նչ աս ամէն բարեգոր-
ծութիւնները՝ որ կըսես , մինչև հի-
մայ մեղաց հետ խառնուեցան , ալ
ի՞նչպէս կըյուսաս որ անոնք ըն-
դունելի ընեն քեզ . կամ՝ թէ որ
կրնայիր շատ աղէկ կատարել բարի
գործքերը . ատ ամէնը քու պար-
տաւորութիւնդ են . և վասն այնո-
քիկ թէև կարողանաս բարի գործ-
քեր գործել , անոնք օգուտ մը

չեն կրնար ընել քու անցած մեղ-
քերուդ . բնաւ ասոնց մէկին պատ-
ճառաւը ամենեին մէկը կարող չէ
արդարանալ . քանզի օրէնքին
գործքերով մէկ մարմին մը չկրնար
արդարանալ Աստուծոյ առջեր :
Հառնվ . դ . 20 :

Ա . Ճշմարիտ է որ իմ առջևս
Ճամբայ մը չեմ տեսներ . թէ որ
բնաւ մեղքով կորսուած մարդ մը
կայ նէ , անիկա ես եմ . ուրեմն
ի՞նչ ընեմ :

Վ . “Հաւատա՛ Տէր Յիսուս
Քրիստոսի , ու պիտի փրկուիս
դուն՝ և քու բոլոր տունդ” : Կարծ .
ԺՂ . 31 : “Աս է Աստուծոյ գործը ,
որ անոր խրկածին հաւատաք
դուք” : Յօհ . դ . 29 : “Ասով ամեն
ով որ հաւատայ , կարդարանայ” :
Կարծ . ԺՂ . 39 : Ուստի այդպէս
մերկ աղքատ մեղաւոր և անօդ .

Նական եկո՛ր Աստուծոյ քովը , որ
Քրիստոսով ողորմութիւն գտնես :
Ա ասն զի անիկա կարող է կեն-
դանի ընելու զանոնք՝ որ իրմով Աս-
տուծոյ կուգան . որովհետեւ ինքը
միշտ կենդանի է անոնց համար բա-
րեխօս ըլլալու : Եբթ . Է . 25 : Եւ
անիկա կարող է լուանալ քեզ
քու ամէն մեղքերուդ պղծութենէն
ու դատապարտութենէն , քու մեղ-
քերուդ զօրութիւնը և իշխանու-
թիւնը կործանել քեզմէ , և բո-
լորովին քեզ սուրբ ընել մարմնով
շնչով և հոգիով , ու մաքուր և ա-
նարատ կայնեցունել քեզ ։ օր
Աստուծոյ առջեր : Եփես . Է . 27 :

Ա . Բնաւ տարակուսանք մը չու-
նիմ Քրիստոսի զիս փրկելուն զօ-
րութեանը ու կարողութեանը վը-
րայ . բայց կը վախնամ թէ այն-
պէս մարդ մը չեմ որ կարենամ
միրկուիլ :

Ք. Աստիօսքը շիտակ իմանալու
համար նայե՛ Աստուածաշունչին
մէջը . վասն զի հոն գրուած է թէ
Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ
մեղաւորները փրկելու համար : ա .
Տէմ . ա . 15 : Հիմա ի՞նչ կըսես ,
դուն ալ անոնցմէ մէկն ե՞ս մի , ո-
րոնք ինքը փրկելու եկաւ , թէ չես
մի :

Ա : Բայց անիկա չուզեր , ու չը-
փրկեր ամէն մեղաւորները :

Ք . Այդ անոր համար է որ ա-
նոնք չեն ուզեր իրեն դալու , որ
փրկուին : Աս բանին համար ինքը
դանդատ կընէ ըսելով , “Կառք չէք
ուզեր ինծի դալ , որ կեանքը ունե-
նաք” : Ըօհ . Ե . 40 :

Ա . Բայց մի թէ գրուած չէ՞ ,
թէ “Ապաշխարեցէք ու հաւատա-
ցէք Աւետարանին” . և թէ “Ով որ
հաւատոյ և մկրտուի , պիտի փըս-

կուի' : Առջեւ . ա . 15 : ժկ . 16 :
Ասկայն ես կը լախնամ որ աս ալ
ըրած չեմ :

«Ք . թէ որ մեղաց բեռովը ծան-
րացած ես , ու կուզես որ ան վը-
րայէդ մէկ դի ձգես , և ջերմեռանդ
սրտով կըցանկաս որ փրկուիս ա-
նոր պղծութենէն ու դատապար-
տութենէն , ապա ճշմարիտ ապաշ-
խարութիւնը սկսած է քու ներսդ :
Եւ թէ որ աս դիտաւորութիւնով
ու փափաքով «Քրիստոսին դաս ,
ինչպէս որ ինքը Աւետարանին մէջ
կըցուցընէ , աս հաւատքն է որ կը
փրկէ : Աւրեմն «Քրիստոսին եկո՞ր ,
որ ընդունես անոր լիութենէն ներ-
քին ու հոգեւոր շնորհքը , որով մեղ-
քին դէմ մեռած ըլլաս , և վերստին
ճնած դէպի արդարութեան . ինչու որ
անիկա կարող է ադ քեզի շնորհել :
Ա . Բառած է , թէ՝ Շատ մար-

Դիկ կըխնդրեն երկնից արքայութիւնը մտնել , ու չեն կրնար . •
 (1) ս-է . ժ-դ . 24 .) և թէ Զէ թէ ամենով որ Տէր Տէր կըսէ , երկնից
 արքայութիւնը պիտի մտնէ :
 Առաքէ . է . 21 : Եհա աս է որ իմ
 սիրտս վախով կըեցունէ , ու զիս
 փրկութենէ շատ հեռի կըթողու :
 «Ք . Աւրեմն որո՞ւն քով փախչիլ
 կըմտածես :

Ե . Զեմ գիտեր . վասն զի ու-
 րիշ անուն մը չկայ երկինքին տակը ,
 որ անով մէկը կարենայ փրկուիլ :
 Գառջ . դ . 12 :

«Ք . Ենանկ է նէ Քրիստոսին
 մօտեցիր որ ազատիս մեղաց հա-
 տուցումէն՝ օրէնքին անէծքէն և
 Եստուծոյ բարկութենէն . անոր
 քովո փախիր որ իրմէն ընդունես
 թողութիւն և խաղաղութիւն , շը-
 նորհը . ու փառք : Եւ թէ որ խընդ-

բելը բաւական չըլլայ երկնից արքայութիւնը մտնելու համար, ջանա . ու թէ որ շատերը Տէր Տէր ըսելով չպիտի փրկուին, թող քու սիրտդ քու բոլոր կենացդ մէջը Տէրը վիճառէ՝ ու զինքը աղաշէ, որ փրկուիս : Ի՞այց այսու ամենայնիւ չէ թէ քու մէկ ջանքդ կամ կարողութիւնդ քեզ ընդունելի կընէ ու կըփրկէ, այլ եթէ քու հաւատքդ ճշմարիտ կենդանի և փրկարար ըլլայ, անատենը բոլոր բարի գործքերը անկից կըբղխին ու առաջ կուգան :

Ա . Ա մոր համար կըվախնամ որ չըլլայ թէ իմ հաւատքս սուտ ու մեռած հաւատք մը ըլլայ :

Վ . Թէ որ քու հաւատքդ ճըշմարիտ ըլլայ, ալ քու յոյսդ ընաւքանի մը վրայ չես դներ, որ քեզմէէ . ոչ քու գործքերուդ վրայ և ոչ

քու կարողութեանդ վրայ , հապա
 մինակ Աստուծոյ ողորմութեանը
 վրայ , որ Քրիստոսով խոստացաւ :
 Աաև Ճշմարիտ ու կենդանի հա-
 ւատքը քու ջերմեռանդութիւնդ
 կարծարծէ ու կըբորբոքէ , քեզ
 Աստուածպաշտութեան նախան-
 ձով կըվառէ , և քաջութեամբ մե-
 ղաց դէմ կոռւելու կըզօրացունէ :
 Ահա աս է որ քեզ կըփրկէ չէ թէ
 մինակ յաւիտենական դատապար-
 տութենէն , այլ և մեղաց զօրու-
 թենէն ու քու աշխարհային ցան-
 կութիւններուն իշխողութենէն . և
 առ կընորհէ քեզի անանկ բարի
 յոյս մը , որ կարենաս հաստատ
 հաւատալ Հիսուս Քրիստոսի
 բարկութենէն փրկուած ըլլալուդ
 տհաւոր դատաստանին ան մեծ օրը :

Ա. Չեմ կարծեր որ աս հաւատ-
 քը ունիմ ես , և անոր համար չեմ

Համարձակիր հաւտալու՝ թէ Աստուած պիտի ներէ իմ մեղքերս ու ընդունի զիս :

Ք. • Ուրեմն Քրիստոսին գնա ,
և Քրիստոսով եղած Աստուծոյ
խոստմունքները ընդունէ , ու ա-
նոնց ապաւինէ , որ քու հաւատքդ
աճի մեծնայ ու մինչև աս կատարե-
լութեանը հասնի : Ա ասն զի աս
հաւատքը Աստուծոյ Առուրբ Հո-
գիին ներգործութենէն է , և վասն
այնորիկ պէտք է խնդրել իրմէն
Յիսուս Քրիստոսի միջնորդու-
թիւնովը :

Ա . Ես չեմ կրնար համարձակիլ
Աստուծոյ խոստմունքները այսպէս
բռնել , Քրիստոսի երթալ , ու ա-
նոր վրայ յոյս դնել . քանզի ես
պղտի ողորմութեան մըն ալ ար-
ժանի չեմ :

Ք. • Ուրեմն երբ քու անձդ ար-
ժանաւոր պիտի սեպես :

Ե. Բնաւ ամենեին :

Ք. Աւրեմն անոր գնաւ հիմայ
ինչպէս որ ես, ու անիկա՞քեղ ար-
ժանաւոր ընէ :

Ե. Ո՞ի թէ կրնա՞մ համարձա-
կիլ Քրիստոսի երթալ ինչպէս որ
եմ, ու իրմէն փրկութիւն յուսալ:

Ք. Ո՞ի հաւատար իմ խօսքիս,
բայց ականջ դիր Աստուծոյ խօս-
քին, որ կըհրաւիրէ քեզ իրեն եր-
թալ ըսելով, “Դուք որ ծարաւի
էք՝ ջրին եկէք”. Եսայ. ծե. 1 : Ին-
քը կըհրաւիրէ քեզ իրեն երթալ
ըսելով, “Ասիկա՞է անոր պատուի-
րանքը ; որ իր Արդւոյն Հիսուս
Քրիստոսի անունին հաւատանք”.

ա. Հօհ. դ. 23: Խնքը կըխոսա-
նայ ընդունել զանոնք՝ որ իրեն
կուգան, ըսելով . “Ան որ ինծի
կուգայ՝ դուրս չեմ հաներ” : Հօհ.
դ. 37 : Եւ ինքը կըսպառնայ՝ թէ

որ իրեն չգաս, ըսելով. “Ա՞ն որ չո-
հաւատար՝ պիտի դատապարտուի”:

Ապրի. Ժկ. 16:

Ա. Բայց որու ըսուած է աս
խօսքերը :

• Ք. Պեղի ինծի և ամենուն՝ որ
աս խօսքերը կըլսեն. ինչու որ
գրուած է թէ “Պարողեցէք Ե-
ւետարանը ամեն ստեղծուածնե-
րուն” : Ապրի. Ժկ. 15: Եւ մանա-
ւանդ անոնց ըսուած է աս խօսքե-
րը, որ կըտեսնեն իրենց կարօտ ըլ-
լալը փրկութեան. վասն զի անոնք
միայն կընդունին աս խօսքերը :
Ա ասն այնորիկ կըսէ Փրկիչը, “Ե-
կէք ինծի բոլոր հոգնած ու բեռ-
նաւորածներ, և ես ձեզ կըհանդ-
շեցունեմ” : Ապրի. Ժկ. 28:

Ա. Աստուածաշունչին ատ խօս-
քերը իմ բերանս կըպապանձե-
ցունեն. բայց տակաւին չեմ կըր-

Նար հաւտալ թէ Քրիստոս կընդունի ինծի պէս յետին չար մեղաւոր մը :

Ք. Աս եր որ ես առաջ ըսի ,
թէ հաւատքը մարդոցմէ չէ , այլ
Աստուծոյ պարգևն է որն որ
Առւրբ Հոգիով Աւետարանը լսող
ներուն կըտրուի : Ուրեմն աս և ու-
րիշ ամէն Աստուծոյ շնորհքնե-
րը խնդրէ աղօթքով Հիսուսի ա-
նունովը . որ քաջալերէ քեզ ա-
ղօթք ընելու ու յուսալու , խորհե-
լով որ Աստուած անոր համար
տուաւ Քրիստոսը՝ որ մեղաւոր-
ները փրկէ . ասոր համար անիկա
աշխարհ եկաւ , ասոր համար ա-
նիկա նեղութիւն կրեց՝ լացաւ՝ ու
իր արիւնը թափեց . ասոր համար
անիկա կըթագաւորէ ու բարեխօ-
սութիւն կընէ երկինքին մէջ : Ա-
նիկա այնչափ կուլէ մեղաւորները

փրկել, որ կը վշտանայ անոնց վը-
րայ որ չեն ուզեր իրեն դալ ու փրո-
կուիլ: Եւ երբ ինքը երկրիս վրայ
էր, լացաւ Արուսաղեմին վրայ ա-
սոր համար:

Ա. Չեմ գիտեր՝ թէ ի՞նչ ըսեմ:

Ք. Ի՞նչ կը խորհիս ընել:

Ա. Հ ատ կը վախնամ որ չպիտի
փրկուիմ. բայց գիտեմ որ ուրիշ
ճամբայ մը չկայ, այլ միայն Աս-
տուծոյ ձրի ողորմութիւնը Վրիս-
տոսով: Ո ասն որոյ կը խնդրեմ
ան քանի որ կինդանի եմ, և թէ
որ կորսուիմ, թող Վրիստոսի
խաչին տակը կորսուիմ ողորմու-
թիւն կանչելով:

Ք. Հ աստատ կեցիր աս մտքիդ
վրայ, ու Աւետարանին ամէն պա-
տուական խոստմունքները քուկդ
են: Ո՞ի խնդրեր հանդիսաւ ուրիշ
տեղ մը, բայց միայն Վրիստոսի

մէջ , մի՛ դներ քու յոյսդ ուրիշ
բանի մը վրայ , բայց միայն Յը-
րիստոսի վրայ : Արթուն կեցիր որ
չըլայ թէ աշխարհիս զբաղմունք-
ները ու բերկրութիւնները քու
միտքդ ծուեն ու հեռացունեն Աս-
տուածային բաներէն . և չըլայ թէ
մեղքով տրտմեցունես Առորբ ու-
գին : Ահաքդ բեր որ գրուած է ,
“թէ որ մէկը երկու մոքով է իմ
անձս անոր չհաւնիր” : Եթէ

Ճ. 38 :



ԵՐԵԱՐԴ ԽՈՍՔԱՅԻԹՈՒԽԵ

Ա. Կըյուսամ որ չես վշտանար .
աս իմ քեզի տուած նեղութիւն -
ներուս համար . ինչու որ շատ կա-
րօտ եմ քու խրատներուդ :

Վ. Աիրելիս , պէտքը չէ որ դուն
զիս իմ երեսիս գովես ու յարգես .
վասն զի ես շատ պիտի ուրախա-
նայի՝ թէ որ իմ ժողովուրդիս ա-
մէնն ալ ասանկ նեղութիւն տային
ինծի . ի՞նչ է քու ինդիրդ :

Ա. Վիշ մը ատեն է անանկ ե-
ղած եմ , որ կենացս մէջը բնաւ

այնպէս եղած չէի առաջ . քանզի
շատ վախցայ որ ես պիտի դատա-
պարտուիմ . ահա աս մտածմունքը
զիս վախով ու տրտմութիւնով լե-
ցուց գիշերցորեկ : Բնաւ հարկ չէր
որ դու զիս զգուշացունեիր աշխար-
հային հոգերէն ու հեշտութիւն-
ներէն . վասն զի ես ուր տեղ որ էի ,
կամ ի՞նչ որ ըրի , միշտ և ամէն
տեղ իմ աշքիս առջին ունեի իմ
մեղքերս ու դժոխքին տանջանքը :

Վ . Բայց ի՞նչ մտածեցիր քու
մեղքերուդ վրայ , կամ ի՞նչ լու-
սով անոնք երեցան քեղի :

Ե . Իմ մեղքերս շատ տարի ա-
ռաջ գործեր եմ , ու հիմա անոնք
իմ դէմն ելին ու զիս դատապար-
տեցին . և իմ տղայութեանս մեղ-
քերուն յիշատակը այնքան զօ-
րութիւնով իմ ետեէս եկաւ , որ-
պէս թէ երեկ և մէկան օր գործած

էի : Աւ քանի մը սարսափելի խօսքեր՝ որ Աստուածաշունչին մէջը կարդացի ու լսեցի, կերևնային թէ յատուկ իմ դատապարտութեանս վճիռներն էին : Աւ կարծեմ հարիւր անգամ մտածեր եմ աս խօսքին վրայ, թէ “Ո՞եղաց հատուցումը մահէ” : Նոռալյ. կը .23 :

Ք. Քննեցի՞ր քու սիրտդ, և տեսա՞ր ու ողբացի՞ր անոր մէջը եղած ապականութիւնը :

Ա. Առաջ չիմացայ քու ըսածիդ միտքը՝ ինչ կուզէիր ըսել սէրպը ժննէլ խօսքով . բայց չիմայ կարծեմ թէ դիտեմ : Ա ասն զի իմ ներսիդիս սաստիկ ցանկութիւն մը կըզգամ դէպի շատ մեղքե՞ր, և կը բւնադատուիմ ըսել թէ արժանի եմ Աստուծոյ բարկութեանը՝ առաջուց ան ցանկութեանը ետեւէն երթալուս համար : Արդարեւ չիմա

իմ սրակիսութիւնս ու վիճակս շատ
 լաւ է քան թէ առաջ : Իմ սրտիս
 ամբարշտութիւնը ու չարութիւնը
 զիս ունայն ընկերութիւններով ու
 սնոտի խաղերով կուրախացուներ
 առաջ , ու ես ինքիրմէս դատարկ
 ու ոչինչ խօսքեր կըխօսէի , աշ-
 խարհային բաներու կըցանկայի , և
 աղօթք ընելը կատէի , կամ անհո-
 գութեամք կաղօթէի . այսպէս նաև
 բոլոր պարտաւորութիւններս բանի
 մը տեղ չէի գներ , կամ թէ մէկ
 ծանր բեռն մը կըսեպէի : Ի՞այց
 հիմայ շնորհակալ եմ Աստուծմէ ,
 որ առաջուան պէս չեմ . ինչու որ
 իմ ամէն խորհուրդներս ու մտած-
 մունքներս վեր դէպի երկինքը
 բարձրացած են իմ հոգիիս ու դա-
 լու աշխարհին համար հոգ տանե-
 լու ու պարապելու :

• Բ . Կըվախնամ թէ քու սիր-

տըդ դեռ այնչափ աղէկ չես գի-
 տեր, որչափ որ կըկարծես։ Կերևի
 թէ դու կըկարծես որ արդէն ամէն
 բան փոխուած ու նորոգուած է քու
 ներսիդիդ։ Տայց մի խարուիր,
 այդպիսի պիղծ թռչնոց բոյնը՝ ինչ-
 պէս որ մարդոյս սիրալ ընու-
 թեամբ, շուտով շրբուիր իր
 կերպ կերպ ցանկութիւններէն ու
 շար յօժարութիւններէն։ Անոնք՝
 որ կըթուին թէ արմատէն հան-
 ուած ու դուրս ձգուած են, կը
 հանդարտին միայն քիչ մը ատեն։
 ուստի արթուն կեցիր, անոնք օր
 մը պիտի ելլեն ու քու վրագ յար-
 ձակին նորէն։ Կարելի է որ անոնց-
 մէ մէկ քանիները միայն փոխուած
 են ուրիշներու հետ, որ անոնց պէս
 զէշ ու վասսակար են, ինչպէս ամ-
 բարտաւանութիւնը՝ հպարտու-
 թիւնը և ուրիշ ասոնց նման։

Ա. Ճշմարիտ է Տէր, ես ալ կը
 վախնամ թէ գուցէ այդպէս ըլլայ .
 պէտք է գիտնաս որ օր մը ես խորհե-
 ցայ թէ որքան մեղաւոր եմ, և թէ
 որչափ ողորմելի պիտի ըլլամ գա-
 լու աշխարհին մէջ . և անատենը
 միտքս եկաւ աս խօսքը, “Ես անոնց
 անօրէնութիւնը պիտի բժշկեմ,
 ու ձրի պիտի սիրեմ զանոնք” :
 Ատոյգ գիտեմ՝ որ աս խօսքը Աստ-
 ուածաշունչին մէջն է, բայց չեմ
 կրնար գտնալ ան: Ինչ և իցէ ան
 շատ միսիթարութիւն տուաւ ինծի,
 և անկից մինչև հիմայ շատ հան-
 դարտած եմ: Բարեկամ մը՝ ո-
 րուն հետ խօսեցայ, ըստ ինծի
 թէ “Ադ բանը Աստուծոյ ներդոր-
 ծութիւնը ըլլալ պէտք է սեպես”,
 և թէ “այսուհետեւ դու կրնաս ին-
 քըլինքդ Աստուծոյ դարձած մարդ
 մը համարել” : Բայց կը վախնամ

որ ամբարտաւանութիւն սեպուի
աս . ուրեմն դու ի՞նչ կըխորհիս ա-
սոր վրայ :

Վ . Եղ խնդիրքդ մեկնելէն ա-
ռաջ պէտք է որ քիչ մը ատեն
քու վարքիդ ու բնութեանդ տե-
ղեկանամ . ան խօսքը որ յիշեցիր ,
Ովսեայ մարգարեութեան տաս-
նըզորս գլխոյն մէջն է . և կերենայ
թէ գերի գացած հրէաներուն հա-
մար խօսուած է . բայց անոնք իրենց
մէջը խոստմունք մը ունին , որ բո-
լորովին Եւետարանին խոստմունք-
ներուն նման է . և վասն այնորիկ
անոնք ձրի են և պատրաստ ամէն
խոնարհ անձին՝ որ հաւատքով ըն-
դունեն զանոնք : Են գլուխին 1—3
համար՝ որ կըտեսնէք , մարգա-
րէն կըյորդորէ ժողովուրդը ա-
պաշխարելու ու խոնարհելու իրենց
մեղացը համար , ըսելով . “Կարձիր

ով Խարայէլ քու Տէր Աստուծոյդ .
 վասն զի ապականեցար քու անօ-
 րէնութիւնովդ : Առէք ձեզի հետ
 խօսքեր , և դարձէք ձեր Տէր Աս-
 տուծոյն . ու ըսէք իրեն . Ա երցուր
 ամէն անօրէնութիւնը , ու մեզ
 շնորհքով ընդունէ . քանզի որբը
 քեզմէ ողորմութիւն կըդժնայ” :
 Հիմա որ Աստուած շնորհեց քեզի
 զգալ ու ճանչնալ քու մեղսալից և
 անօդնական վիճակդ , որ փափա-
 քիս իրեն դառնալ , ինչպէս որ
 մարդարէն ալ կըսէ՝ թէ Աս է ա-
 ռաջուց պատրաստութիւնը խա-
 ղաղութեամբ պատասխանելու . ա-
 պա յոյս ունիմ որ հետեւեալ
 խոստմունքը քեզի կըլերաբերի .
 Ես պիտի բժշկեմ անոնց անօրէ-
 նութիւնը , ու ձրի պիտի սիրեմ
 զանոնք . վասն զի իմ բարկութիւնս
 անցաւ անոնցմէ : Եւ կըյուսամ ալ
 և ֆ

որ աս քեզի եղած խռոտմունքէն
 հաւատքով դտած մխիթարու-
 թիւնդ Առլը Հոգիէն յառաջ ե-
 կած է . ինչպէս որ կրտեսնեմ թէ
 քու մեղաւոր ըլլալդ զգայն ալ՝ որ
 քեզ վախով ու խոնարհութիւնով
 լեցուց՝ երբոր մտածեցիր քու մեղ-
 քերուդ վրայ ու Եստուծոյ դա-
 տաստանին մեղաւորներուն դէմ
 ըրած վճռոյն վրայ , Առլը Հո-
 գիին ներգործող զօրութենէն է :
 Վ ասն զի ինքն է որ կը յանդիմանէ
 աշխարհը մեղաց համար և արդա-
 րութեան համար : Յօհ . Ժղ . 8—
 10 : Յայց պէտք է աս ըսեմ քեզի
 որ աս ամէն զգացողութիւնները ու
 սրտի շարժմունքները վախնալու
 բաներ են , մինչև որ տեսնենք
 թէ անոնք ինչ պտուղ առաջ
 կը բերեն սրտին ու կեանքին մէջ :
 Յանդի երբեմն կը լսայ որ՝ թէ և

Վատուծոյ Հոգիէն բղխած են և
շատ ընդունելի , երբոր խիստ կը
միաբանին Վատուծոյ խօսքին հետ ,
ինչպէս որ հիմակուան քու վի-
ճակդ , բայց նոյն ժամանակն ալ
կրնայ ըլլալ որ մեր հոգեոր թըշ-
նամին աս երեելի մտածմունքները
այնպէս ձեւացունէ՝ որ մեզ խարէ :
Եւ անհնար է ըսել թէ որքան
շուտով մեր ընական խառնուածքն
ալ և մեր ընութիւնն ալ կօգնեն
անոր ու հաճութեամբ կըմիանան :

Վ . Կաղաչեմ տէր , յայտնի ըսէ-
ինծի , թէ ի՞նչ կըխորհիս իմ վի-
ճակիս վրայով :

Ք . Վատուծոյ շնորհացը յա-
տուկ երկու նշանները կան , որոնք
Վատանան կարող չէ սուտ կեր-
պով ձեւացունել ու քեզ խարել :
Վոաջինը՝ սուրբ ու նորոգուած
սիրտ մը ունենալն է , որն որ միշտ

ու ամէն ատեն մեղքը կատէ . Երկ-
քորդը՝ սուրբ կեանք մը վարելնէ ,
որ Աստուծոյ ամէն պատուիրանք-
ները կըպահէն ու կըկատարէ : Ու-
շեմն ստացիր ասոնք և քու կեան-
քովդ ու վարքովդ ցուցուր , որ քու
սրտիդ մտածմունքները ու բեր-
մունքները սուրբ ու մաքուր են :
Անատենը չեմ տարակուսիր քու-
կին փրկութեան ճամբուն մէջ հաս-
տատուած ըլլալուդ :

Ա . Արչափորիմ սիրտս գիտեմ ,
չեմ ուզեր որ իմ յօժար կամքովս
զԱստուած բարկացունեմ թէ և
կարելի ըլլար ինծի բոլոր աշխար-
հը ստանալ : Ես կըտեսնեմ ու
կուրախանամ որ Աստուած Յի-
սուս Քրիստոսի ձեռքովը իր ար-
դարութիւնը կըպահէն ու կարդա-
բացունէ ղանիկա , որ կըհաւատայ :
Ալսիրեմ զանոնք՝ որոնք որ կը

թուին թէ անոր ծառաներն են . և
պատրաստ եմ որ իմ երեսիս ու
ծունկերուս վրայ քալեմ անոնց ա-
ղէկութիւն ընելու , կամ ուրիշ-
ներն ալ անոնց նման ընելու հա-
մար : Ալսիրեմ անոր խօսքերը լը-
սել անոր աղօթք ընել հոգեոր և
երկնային բաներուն վրայ խօսիլ .
և կարծեմ յօժարութեամբ կը
մեռնեի թէ որ իր կամքը ըլլար :

Վ . Շատ աղէկ , ատոնք բարի
նշաններն են . բայց ատիկա քու սի-
րոյդ առաջին ջերմեռանդութիւնն
է , և ոչ թէ ատիկա միշտ այդպէս
կըմնայ քուներսդ : Ա ամն զի այդ-
պէս էր նաև խրայէլացիներունը ,
անոնց կարմիր ծովը անցնելէն ե-
տե , և Գաղատացւոց և Հփեսաց-
ւոց եկեղեցիներունը . բայց ասոնց
ամէնն ալ պաղեցան ետքը , ու անոր
համար շատ նախատռւեցան Աս-
տուծմէ :

Ա. Տէրիմ, կըհաւատամ որ
զու ինծմէ աղէկ զիտես իմ վը-
տանդի մէջ ըլլալ, ըսէ ինծի,
ի՞նչ ընեմ:

Պ. Գանք ըրէ որ քու կոչումդ
և ընտրութիւնդ հաստատես ու
յայտնես քեզի ալ ուրիշներուն ալ
արդարութեան պտուղ բերելով,
բարի քաղաքավարութիւնով :

Իմ առաջին խրատս ան է. Աս-
տուծոյ հետ քալէ խոնարհու-
թեամբ. թող միշտ քեզ ամօթով
ծածկէ քու անցուցած մեղսալից ու
յիմար կեանքիդ յիշատակը. յիշէ
քու կեանքիդ շատ ծանրացուցիչ
ընթացքը՝ որ մինչև հիմայ ունեիր
Աստուծմէ հեռանալով ու ապրս-
տամբելով : Ուշակէտ և քու կե-
նացդ մէջ ամէն ատեն՝ ինքը իր ո-
ղորմութիւնը քու վրագ միշտ և
հանտապազ ցուցուց, ու ան ամէ-

նուն վրայ ալ որ քուիդ են , տա-
 լով քեզի կերակուր՝ հանգերձ ա-
 ռողջութիւն ու զօրութիւն . բայց
 դու զինքը միշտ ատեցիր . և մա-
 նաւանդ մոռցար զինքը ան նոյն ա-
 տենը , երբոր իր յատուկ խնամքը
 ու ողորմութիւնները վայելեցիր :
 Այս ինքը քեզ պահպանեց մինչև
 անդամ քու ամեն մեղքերուդ մէջ ,
 որոնցմավ դու զինքը բարկացու-
 ցիր ու վշտացուցիր . և վերջապէս
 քացաւ քու հոգիիդ աչքերը որ
 տեսնես քու կորուստդ , և արքման-
 ցուց քեզ դատապարտութեան
 քունէն՝ որ փախչիս անկից . և հի-
 մայ ալ իր անճառելի շնորհքովը
 քեզ կը քաջալերէ և կը զօրացունէ ,
 ու յոյս կուտայ որ յաւիտենական
 կեանքը ստանաս : Ահա այսպէս
 բաղդատէ Աստուծոյ քեզի ըրած
 ամեն բարերարութիւնները անոնց

հետ , որոնց որ դուք արժասի ևս ,
 անատենը պիտի սորուխ՝ թէ ի՞նչ
 պէս խոնարհիլ պէտք է քեզի :
 Աւրեմն՝ սորվէ սիրելիս , ճշմարիտ
 խոնարհութիւն . նայէ հոգւոյ աշ-
 քով ան քու ունեցած մեղքերուդ
 վրայ , որ տակաւին կը մնան քու
 ներսդ . և թող քու մեղմնչական
 բարբդ՝ քու ունայն խորհուրդներդ՝
 քու ծուլութիւնդ և ան ամէն պա-
 կասութիւնները՝ որ քու պարտա-
 ւորութիւններդ լեցունելու կող-
 մանէ կերևին , սորվեցունեն քեզի
 խոնարհ ու հեղ ըլլալ և վախնալ .
 ու այսպէս դու քեզմէ վախնալով՝
 մէկ անօգնական տղայի մը պէս
 վերնայէ դէպի լուսուած , որ միշտ
 դօրանաս , և Հիսուս Քրիստոսի
 ապաւինիս որ իր ձեռքովը նեղու-
 թեան ժամանակին օգնութիւն ըն-
 դունես :

Եմ երկրորդ խրատս ալ աս է .
 քու խղճմտանքդ ամէն անիրաւու-
 թիւններէն ազատ պահէ . քու մեղ-
 քերդ Աստուծոյ առջելը խոստո-
 վանելու մի ամչնար . և քու կարո-
 ղութեանդ չափովը վճարէ ան
 զրկանքը , որ ան ապրանքին անէծ-
 քը քեզի ալ չպըւրշկի : Արթուն
 կեցիր , որ Աստուծոյ Հոգին չը-
 տրտմեցունես անմաքուր վարքով ,
 և չըլայ թէ բարկացունես զինքը
 որ քեզ երեսէ ձգէ ու հեռանայ
 քեզմէ : Ա ասն այսորիկ արթնու-
 թեամբ նայէ քու սրտիդ վրայ ան-
 դադար հսկելով , և միշտ անոր
 առջին կտրէ որ դէպի մեղքը չհա-
 կամիտի , և աչքդ բաց ու դէմ կե-
 ցիր ամէն փորձութիւններուն՝ որ
 դրսուանց են , և քու աչքդ միշտ
 ան մեղքերուն վրայ հաստատէ ո-
 րոնցմէն առաջ յաղթուեցար : Եւ
 Կ * Ֆ

թէ որ անդամ մը մեղքը քու վըադ
 զօրանայ , ալ մի՛ թողուր որ քու
 միտքդ մոռնայ ան , և մի՛ պահեր ան՝
 քու ծոցիդ մէջ իրրե քու կենդա-
 նարար բերկրութիւնդ , հապա
 թունաւոր օձէ մը վախնալու պէս
 ձգէ փախիր շուտով դէպի Աս-
 տուած . աս ամօթը յանձդ ա՛ո ,
 Աւետարանի խոստմունքները միտ-
 քըդ բեր՝ որ դարձի եկած մեղա-
 ւորներուն եղած են : Քու բոլոր
 յոյսերդ Հիսուս Քրիստոսի վրայ
 դիր , ու միայն իրեն նայէ ինչպէս
 քեզի բաւական պատարադ ու միջ-
 նորդ Նօր Աստուծոյ առջեր . և
 քնաւ մի՛ դադարիր աղօթքով Աս-
 տուծոյ երեսը խնդրելէն՝ մինչև որ
 մէյմըն ալ խաղաղութիւն շնորհէ
 քու տրտմած հոգիիդ , ու ալ ա-
 ւելի մեծ վախով լեցունէ քու
 սիրտդ՝ որ նորէն չտրտմեցունես
 զինքը :

Պառ հիմա լինչպէս որ կը յուս
 սամ, Աստուծոյ այդիին մէջ տըն-
 կուած ես, և ահա ժամանակ է
 պտուղ տալու, ուրեմն պէտք է որ
 պտուղ բերես : Վու սրտիդ մէջը
 դիր Աստուծոյ սէրը, որ դէպի մե-
 զաւորներուն է Հիսուս Քրիստոսի
 ձեռքովը, մանաւանդ միտքդ բեր
 թէ Աստուած որքան ողորմութիւն
 ցուցուց քեզի, որ քեզ խաւարէն
 գէպի իր սքանչելի լոյսը կանչեց :
 Հիշէ որ ինչպէս մեղաց քունին
 մէջ թմրած ինկած էիր ու ծու-
 լութեան մէջ ընկղմած, երբոր
 Աստուած արթնցուց քեզ . որ քու
 կորուստդ տեսնես ու անկից փախ-
 չիս : Ատածէ անդամ մը՝ թէ քա-
 նի՞ ողորմելի պիտի ըլլար քու վի-
 ճակդ յաւիտեան, թէ որ քու կամ-
 քիդ հետեւելու թողեր քեզ :
 Ատմասաւ նաև թէ քանի՞ քանի?

մարդիկ դեռ հիմայ ալ ան կորըս-
 տեան ճամբայէն կըվազեն, ուրկից
 որ դուն ալ վազեցիր: Եւ թող
 արթնցունէ քեզ Աստուծոյ առ
 քեզ եղած յատուկ սիրոյն յայտ-
 նութիւնը, որով դուն ալ զինքը
 սիրես: Ոիրէ զինքը քու բոլոր
 սրտովդ: ինչու որ առաջ ինքը
 քեզ սիրեց: Եւ առ երկնաւոր Հայ-
 րդդ ունեցած սէրդ թող քու խոր-
 հուրդներուդ՝ խօսքերուդ ու դործ-
 քերուդ մէջը մտնէ ու ներդործէ:
 Ոիշտ և անդադար քաղցրու-
 թեամբ Աստուածայնոց վրայ մը-
 տածէ: Եւ քու սիրտդ դէպի անոր
 բարձրացուր որ քու սիրտդ ու
 խորհուրդներդ կըքննէ: Վու երկ-
 նաւոր Հօրդ հետ մէկ առանձին
 հաղորդութիւն ու միաւորութիւն
 մը ունենալ խնդրէ, ու ասոր հա-
 մար ջանա՛ որ քու խորհուրդներդ

աշխարհի բաներէն ետ դարձունես. և քու միտքդ դէպի երկինքը դարձուր ան բաներուն՝ որ անտեսանելի են, բայց միայն հաւատքով կըտեսնուին : Ահա այսպէս քու հաւատքդ՝ յոյսդ՝ ու սէրդ Աստուծոյ ու երկինքին վրայ հաստատելով երկնից բնակիչի մը պէս վարես նէ քու կեանքդ աս աշխարհիս մէջ, ապա Աստուծոյ ընդունելի կըլլաս, ու երկինքին երանաւէտ և անվախճան թագաւորութիւնը կը ժառանգես Հիսուս Քրիստոսով :

Այսուհետեւ քու ոչինչ խօսակցութեանդ տեղը թող քու լեզուդ Աստուծոյ փառքին համար խօսի իր անունը փառաւորելով, իրմէն՝ քու մարդասէր բարերարէդ շնորհակալ ըլլալով, իր քու հոգիիդ համար բոլոր ըրածները ամէնուն պատմելով, մեղաւորներուն՝ իրենց

կորուստը ցուցընելով , և անոնց
սիրու տալով՝ որ Աստուծմէ վախ-
նան , և որ ժիր ու կտրիճ ըլլան ա-
նոր ծառայութեանը մէջ :

Եւ քու կենցաղավարութիւնդ
թող անանկ ըլլայ , ինչպէս որ Ա-
ւետարանին կրվայլէ : Դու կան-
չուեցար որ Հաւատքին բարի կոխը
կոռուխ . նայէ՛ որ չթուլնաս կամ
չձանձրանաս բարիք դործելէն :
Հայտնի ցուցուր որ կենդանի ես
Աստուծոյ Համար , քու անձդ անոր
ծառայութեանը տալով , ու քու
ջերմեռանդութիւնդ անոր մէջ
յայտնելով : Եւ ջանա քիչ մը բան
ընել անոր Համար՝ որ այդքան
բան ըրաւ քեզի Համար : Աիրէ ա-
մէն մարդիկ , ինչու որ Աստուծոյ
ձեռացը ստեղծուածներն են . բարի
ըրէ ամենուն քու կարողութեանդ
չափովը . քանզի ժամանակը ու կա-

րողութիւնը և ուրիշ շնորհքները
անոր համար տրուած են քեզի՝ որ
շատցունես զանոնք ու լաւ շահիս :
Կործածէ զանոնք սիրոյ ու գթու-
թեան գործքերով . բայց քու
սիրտդ ամեն մարդոյ համար , և
քու թշնամիներուդ համար ալ . որ
անոնց համար աղօթք ընես ու ա-
նոնց թողութիւն տաս . և միշտ
պատրաստ կեցիր որ բարիով յաղ-
թես չարին :

Կամանապէս արթուն կեցիր որ
Աստուածպաշտութեան զօրու-
թիւնը քու սրտիդ ջերմեռանդու-
թիւնովը ցոյց տաս ան պարտաւո-
րութիւնները կատարելով՝ որն որ
պարտական ես քու ընտանեացդ :
Քաղցրաբարոյ և բարեսիրտ եղիր
ան ամենուն որ քու բոլորտիքդ են :
Քու անձդ խոնարհութեան՝ սի-
րոյ ու համբերութեան օրինակ ըրէ

քու ընտանեացդ : Յուցուր քու
 ունեցած խնամքդ անոնց հոգինե-
 լուն ու մարմիններուն վրայ , միշտ
 տան մէջ ջերմեռանդութեամբ ա-
 զօթք ընելով , և Աստուծոյ խօսքը
 անոնց հետ կարդալով : Իրօք ցու-
 ցուր քու ընտանեացդ ու բարե-
 կամներուդ քու նոր սիրտ ունե-
 նալու ու նոր կեանք վարելու . և
 ջանք ըրէ որ բոլորովին Աստուծոյ
 կամքին ու խօսքին միաբանիս :
 «Քու ամէն առեւտուրդ խղճմտան-
 քով ըրէ . ամենուն քու պարտքդ
 վճարէ . որին որ հարկ կըպարտիս ,
 հարկը . որին որ մաքս , մաքսը . և
 այսպէս ևս քու ամէն օրինաւոր
 պարտքդ . և ընաւ մէկը մի՛ զրկեր ,
 ոչ թագաւորը և ոչ քու հարկա-
 տու ընկերդ . և անոնց՝ որ զրկանք
 կընեն , ընաւ մի՛ յօժարիր սիրտ
 տալ , ու զրգուել զանոնք որ զրկանք
 ընեն :

Ա,աև մասնաւորաբար սէր ցուցուր ճշմարիտ հաւատացեալներուն
 Քրիստոսի համար . վասն զի ամէն մարդիկ Աստուծոյ պատկերին
 պէս ստեղծուեցան առաջուց ; և աս
 պատկերը վերստին նորոգուած է
 անոնց ներսը , ու անոր համար անոնք առանձին Քրիստոսի սեպ-
 հական ժողովուրդը են : Ինչու որ
 Քրիստոսի արիւնովը լուացուեցան
 իրենց մեղքերէն , ու անոր հոգիովը
 սրբուեցան : Եւ աւելի ժիր ու ջեր-
 մեռանդ եղիր աս դործին մէջ ու
 սիրոյ համար ջանք ընելու մէջ .
 Նայէ շատ անգամ հաւատքի աչ-
 քով դէպի ան փառաւոր վարձքը՝
 որ քու առջեղ կըկենայ , դէպի յա-
 ւիտենական փառքին մեծութիւնը՝
 որ պիտի տրուի ան օրը , երբոր
 Քրիստոս հատուցում ընէ բոլոր
 ողորմութեան ու սիրոյ դործքե-

բուն, որ իր անունին համար եղած են, այնպէս՝ որպէս թէ յատուկ իրեն համար եղած են :

Ուրեմն աս խորհրդովս միսիթարուած և աս յուսովս ժրացած, ջանքը ըրէ որ աճիս զարդանաս զիտութիւնով սրբութիւնով հաւատքով ու սիրով, Աստուծոյ վախովը և ցածութիւնով, և ամենքրիստոնէական շնորհքներով : Վանա առաջ տանիս Աստուծոյ փառքը, մարդոց երանութիւնը, և քու անձիգ զգայութիւնները, քու միտքդ ու կամքդ այնպիսի կերպով, որպէս զի ընդունելի ըլլաս, ու սրբոց բաժինին հասնիս լուսոյ մէջ ըրնակելու համար: Եւ աս սրբութեան գործը առաջ տանելու համար՝ յոյսդ Աստուծոյ շնորհքներուն վըրայ դիր որտի մոօք գործածելով ան ամենը, որով կարելի է շնորհք

ստանաս . ինչպէս աղօթք ընելով ,
եկեղեցի երթալով , Աստուծոյ
խօսքը լսելով ու կարդալով , և ա-
նոր ամէն պատուիրանքները բոլոր
սրտով կատարելով : Ոճէ որ այս-
պէս վարես քու կեանքդ , անատենը
Քրիստոսի մէջ հաստատուած և
ամէն հոգեւոր երանութիւնով լց-
ուած մարդ մը կը լլաս :

Ա . Տէր իմ , շնորհակալ եմ
քեզմէ . թէպէտ կըտեսնեմ որ
առջևս եղած գործը շատ մեծ է ,
բայց կը յուսամ որ Աստուծոյ օգ-
նութեամբը պիտի կարողանամ
յառաջ տանիլ ան՝ մինչեւ վերջը :

Վ . Պէտք է որ դու շատ դժուա-
րութիւններու ու շատ հակառա-
կութիւններու համար պատրաստ
ըլլաս . վասն զի երկնից ճանա-
պարհը խաչի ճանապարհ է , որ
շատ նեղութիւններ ունի տալու

անկից անցնողին : Աշխարհը՝ մար-
 մինը ու Աստանան զօրեղ թշնա-
 միներ են, ու պինտ հաստատ միա-
 բանած են իրարու հետ : Քու
 ընութեանդ տկարութիւնները
 միշտ փորձութիւններու մէջ կիյ-
 նայ, և կըթուլնայ ու կուզէ ետ
 քաշուիլ . անոր համար քու սիր-
 տըդ իր մեղսալից ցանկութիւն-
 ներովք քեզ միշտ կըշարչարէ և կը
 տառապեցունէ : Առ մարդիկ ալ եր-
 բոր կըտեսնեն քեզ որ ան լայն
 ճամբայէն կըհեռանաս, որն որ ա-
 մենքը դէպի կորուստը կըտանի,
 ամենքն ալ քու վրադ կըյարձա-
 կին, և չէ մինակ անհոգները ու
 ամբարիշտները քեզ ծաղը կընեն
 ու կընախատեն, հապա ան քրիս-
 տոնեաներն ալ՝ որ միայն անունով
 քրիստոնեայ են ու դրսուանց բա-
 րի կերենան, քեզի դէմ կըհակա-

ռակին : «Քանզի շուտով պիտի ըսեն
 իրենց սրտերնուն մէջ ի՞նչ որ Փա-
 րիսեցիները կըսէին՝ թէ ՚յու մեր
 հասարակ ճամբան ձգելով ու ա-
 տելով մեղ ամէնքս կըդատապար-
 տես : Ա երջը Ատանան զարմա-
 նալի խորամանկութիւնով իր կամ-
 քին պէս կըշարժէ մարմինը ու աշ-
 խարհը , և կամ հակառակութիւ-
 նով կամ կեղծուպատիր քաղց-
 րութիւնով կըջանայ որ ճշմարիտ
 հաւատացեալները կորսնցունէ , և
 շատ ատեն ալ չար խորհուրդներ
 կըյարուցանէ անոնց մտացը մէջ՝
 որ հաւատքին զօրութիւնը կոր-
 ծանէ , ու մեղաց իշխանութիւնը
 դարձեալ հաստատէ : Ի՞նչ դու
 մի՛ վախնար . վասն զի Աստուած
 ամենէն մէծ է : «Քրիստոս միշտ
 կենդանի է մեղի համար բարեխօ-
 սութիւն ընելու , և պատրաստ է

փրկել անոնք՝ որ իրմով Աստուծոյ
 կուգան : Սուրբ հրեշտակները պա-
 հապանի պէս կըպաշտպանեն քեզ .
 և ամեն ճշմարիտ Աստուածապաշտ-
 ները քեզի սիրելի եղբայրներ ու
 պատրաստ բարեկամներ կը լան :
 Ուրեմն քեզի հետ եղողները շատ
 են՝ քան թէ անոնք որ քեզի հակա-
 ռակ են : Դառն քու անձիդ թշնամի
 մի՛ ըլլար , ապա բնաւ բան մը կամ
 մէկը կարող չէ քեզի վնաս տալու :
 Ինյց մի՛ ըլլար մտքովդ ամբար-
 տաւան , այլ վախցիր . քանզի երա-
 նելի է ան մարդը՝ որ կըվախնայ
 միշտ : Աստուծուն , ի՞լ , 14 :



թ. Ա.

№ 8298

“Ո՞ւնչ է շշահի մորդ Տը՝ լե
ու բուլը աշխարհ վաստակի, և եւ
անյը զնառն. իսա էր անյին հո-
մոք ի՞նչ ապահով ողիոն պայ
մորդ” : Առաջ, ԺՂ. 26 :